

72

ՊՈՏԱՆԵԲԿՈՅՑ ԳՐԱԴՈՐՈՅ

19

ԹԵՎԿԻՏԱԿԱՆ ՄԵՐԻԿ

19

ԳՐՈՒ. Գ. ՅՈՒ. ՅՄԻԿ

ՄԵՐ ԸՆՏԱՆԻ  
ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ  
ՅԵԿ  
ՆՐԱՆՑ ՊԱՏՄՈՒ-  
ԹՅՈՒՆԸ

ԽԵԶՐԱՅ-ՅԵՐԵՎԱՆ

599.75

C - 72

'15 JUL' 2013

14993

599.45  
6-72

'80 JUL 2020

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
№ 19 ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 19

ՊՐՈՖ. Պ. ՅՈՒ. ՇՄԻԴ

# ՄԵՐ ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

## Յ Ե Վ

### ՆՐԱՆՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

Թարգմ. Խ. ԿԱՆԱՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1928 թ.

## I. ՄԱՐԴԸ ՅԵՎ ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

Առաջ, շատ առաջ և յեղել այդ, — այնքան առաջ, վոր այդ ժամանակների մասին չի պահպանվել և վո՛չ մի հիշողություն։ Նրանց մասին գիտնականները միայն այժմ են մեծ զժվարությամբ խմանում՝ զետնի մեջ գտնված վոսկորների մնացորդների, զանազան քարե գործիքների և խոր այրերի պատերին տեղ-տեղ պահպանված այն ժամանակվա մարդկանց նկարների միջոցով։

Այնուա՛զ, ուր այժմ քաղաքներն ու գյուղերն են գտնվում, ուր սելաների—յերկաթզծերի վրայով զնացքներն են մահչում ու զետերի յերեսով չոգենավերը սլունում, — տարածված եյին խիտ, անանցանելի, բազմաթիվ զավաններով լիցուն անտառներ, ձգված եյին համատարած ճահճներ և անծայրածիր անապատներ։

Ահա այդ վայրի բնության մեջ ապրում եք նախոմարդը, տալաստանելով անտառներում ու լեռների սոսորուներում, ուր նա համար ոթեան եր զանում քարանձավներում, վորոնք և փրկում եյին նրան ձմեռվա ստնամանիքներից։ Ներկա տաքուկ բնակարանը զետես նորի համար չեր կարողանում կառուցանել։ Նրա գլխով զոր զբաղմունքը վորորդությունն ու ձկնորսությունն եր։

Կանայք անտառում հավաքում եյին զանազան հատապտողներ՝ ընկույզներ, անտառի ծառերի պտուղներ, զետնի միջից հանում եյին տաերա հորմար արմատներ և այդ բոլորը նրանք մթերում եյին յերկարատու ցուրտ ձմեռվա համար։

Այն ժամանակները մարդը զետես զաղափար չուներ վո՛չ յերկաթի և վո՛չ ել պղնձի մասին։ Նա իր համար գործիքներ եր չինում քարից, — փնտուում, զանում եր

ՀԱՅՊՈԼԵԿՐԱՑԻ I ՏԵԱՐԱ  
ՊԱՏՎԵՐ 3932  
ԳՐԱՓԵԹ. 811 F. ՏԵՐԱՎ 4000.

Հարթ կայծքարեր, վոր ճեղքում ու սրում եր իրար քնելով։ Քարե կացինը, քարե դանակը, քարե կամ վոսկը ծայրով նիզակը, նետ ու աղեղը՝ քարե ծայրերով, — ահա այն բոլորը, վորոնցով նա պետք է դուրս դար գայլերի և արջերի, բորենիների, հովազների և մինչեանդամ առյուծի ու վագրի գեմ։ Նույն գենքերով նա վորսի յեր յենում կատաղի վայրի ցուլի և վարագի գեմ, վայրի ձիերի յերեմակներին եր հետեւմ ու քշում գեպի գիտմամբ փորված խրամատները՝ մինչեանդամ հսկա մազոտ փիղ—մամոնտին, վորն այն ժամանակները դոյցություն ուներ Յեվրոպայում։

Այն ժամանակ մարդու կյանքը ծանր եր և վտանգավոր ու զրկանքներով լեցուն։ Նա կարող եր հույս գնել միմիայն իր սեփական ուժերի վրա։ Նա ստիպված եր իր իսկ ուսերի վրա կրել բոլոր ծանրությունները, մի տեղից մեկ ուրիշ տեղ շարժվելու ժամանակ նա պիտի վըստահեր միմիայն իր սեփական վոտքերին։ Նա սպրում եր իրեւ մի խղճուկ վայրենի, վոր շարունակ հարկադրված եր վախենալու բազմաթիվ թշնամիների հարձակումներից, այն թշնամիների, վորոնք նրան բոլոր կողմերից շրջապատել եյին։ Յեվ պետք է կարծել, վոր նա վո՛չ առանց նախանձի նայում եր ուժեղ ու ճկում վայրի կենդանիներին, վորոնց՝ իրեն կյանքի պահպանության համար բնությունն ոժանել եր սուր ատամներով ու մատիլներով։

Մարդը թույլ և անզոր եր նրանց համեմատությամբ, սակայն բնությունը պարզեց եր նրան այնպիսի մի գենք, վորը տակավին մինչեւ նրա յերկրի վրա յերեալը վո՛չ մի կենդանի չուներ, — նու ուներ հզոր միաբը բանականությունը՝ բավականաչափ զարգացած գլխի ուղեղով, և դրանով իսկ զանազանվում եր իր բոլոր չորքուանիցներից։ Բանականությունը հնարավորություն եր տալիս նրան դիտել ու համեմատել, հասկանալ պատճառները և իմանալ, թե վորը՝ վորից կախում ունի, նա հուշում եր մարդուն ստույզ վճիռներ անել, սովորեցնում եր, թե ինչպես պիտի վարդել դժվարին դեպքերում։

Յերկրի վրա յեղած բոլոր եյակների նկատմամբ ունեցած՝ իր հենց այդ առավելության չնորհիվ եր, վոր մարդս, չնայելով իր թուլության և անզորության, կարողացավ հաղթանակ տանել բոլոր չորքուանիների վերաբերմամբ։ Նա աստիճանաբար կատարելազործեց իր զենքը և դարձրեց այն ավելի ուժեղ և ավելի վտանգավոր, քան մագիլներն ու ատամները։ Փայտյա և վոսկը յարձիքները փոխարինվեցին բրոնզյա և ապա յերկաթյա գործիքներով։ Գազանների գեմ կովելու և նրանց վորսալու համար մարդը մտածեց ամեն տեսակ թակարդ ու դարան, շինեց հարմար փոսեր, ներս քչելու տեղեր, դրեց վարմեր ու վորոգայթներ։ Պարսատիկով ձկած սուր սլաքներն ու փայտերը, նույնպես և քարերը սպանում եյին գազաններին հեռվից և թույլ չեյին տալիս նրանց մոտենալու։ Կրակը, վորից մարդը սովորեց ողտվել, նույնպես ոգնում եր նրան պաշտպանվել գիշատիչներից, — նա շինում եր խարույկներ և վախեցնում գազաններին հրաբորով կոճղերով։

Այնուամենայնիվ մարդու կյանքը ծանր եր, գժկարին, քանի դեռ նա մենակ եր կրում աշխատանքի ամբողջ ծանրությունը։

Սակայն, անկասկած ե, վոր դեռ ևս այն ժամանակներում՝ իրեն շրջապատող կենդանիների միջից գտել եր իր համար ոգնականներ, վորոնք մի կողմից նրան կերակուր և հագուստի համար մորթիներ եյին հայթայթում, մյուս կողմից նրա կյանքին վտանգ եյին սպանում։ Յեվ այդ ոգնականները մարդու գոյության պայմանները թեթեացըրին և նպաստեցին նրա բարձր աստիճանի զարդացման։

Ի՞նչպես պատահեց այդ։ Մենք այստեղ իհարկե կարող ենք միայն գուշակություններ, յենթադրություններ անել, վորովհետեւ մարդու առաջին մոտիկությունը դեպի կենդանիները տեղի յեւնեցել այնքա՞ն հեռավոր ժամանակներում, վոր այդ մասին վոչ մի հիշողություն և վոչ մի հետք անդամ չի մնացել։

Պետք է յենթագրի, վոր վորասրդները հաճախակի սպանում եյին՝ իրենց ձագուկներն առաջնորդող հասա-

կավոր կենդանիներին, կամ հալածելու պահին ջահիլ կենդանիներին բռնում եյին թակարգի փասերում, ինչպես այժմ ել գեռես անում են շատ վայրենի ցեղեր։ Յեվ յեթե ավարը լինում եր բավական առատ, այն ժամանակ ակամայից միտք եր ծագում՝ ջահել կենդանիների պահպանության մասին, նրանց իրեն պաշար իրեն մոտ պահելու համար, վորավհետեւ կարող եր պատուհել, վոր հաջորդ անդամ վորսն անհաջող անցներ։

Զահել կենդանին մարզու մոտ սնվելով, ինչպես գիտենք, հեշտությամբ և սովորում նրան, այսինքն՝ դպրաբում և յերկուդ քաշելուց, ընտերանում և նրան և սկսում և վատահ վերաբերմունք ցույց տալ։

Սկզբում նախնի վորսորդների գլխավոր նպաստին անշտառ այն եր, վոր իրենց մոտ մշտապես ունենան մոի պաշար։ Բայց, պետք և յենթաղրել, թե մարզիկ զոնազան վայրի կենդանիներին իրենց մոտ պահելու, ոնուցելու ժամանակ կարող եյին նկատել, վոր նրանցից վորմանց կարելի յեր սպասպարձել և այլ առըբեր հանդամներում։ Նրանք կարող են տալ կաթ, կարող են ծառայել մարզկանց և այլ ծանրություններ փոխազրելու համար ամեն ուրիշ տեսակի աշխատանքների համար կարող են ուժ մտակարարել։ Նախամարդը նկատելով այդ՝ հավանորեն բազմատեսակ վորձեր և արել նրանց ընտելացնելու համար և փորձ փորձել ամեն տեսակ միջոցներով սպասպարձելու իր սանիկներին։ Այդ փորձերի ժամանակ յերեաց, վոր կենդանիներից վոմանք ամելի հեշտ եյին սովորում մարզկանց, ուրիշները—ամելի զժվար, և վոմանք սպասկար եյին, իսկ ուրիշներն ավելի պակաս սպասպարձելի։

Վորսի ժամանակ ջահել կենդանիների նկատմամբ յեղած ավարը, այնուամենայնիվ, պատահականության արդյունք եր։ Մինչդեռ մարզն անշտառ կցանկանար լրացնել իր պաշարը ձեռնասուն դարձած կենդանիներով, հատկապես նրանցով, վորոնք իրթվային նրան վորեն բանով սպասկար։ Դիտազությունը, փորձը և շատ կարելի յե հենց գիտածը վոր հաջորդ այժմ ել չեն կաված վարչության մարդուն, վոր սպարած, ձեռնասուն կենդանիները կա-

րող են գերության վիճակում բազմանալ այնուհետեւ հնարավոր գարձավ կենդանիների բազմացնելը և ձեռնասուն կենդանիներին ընտանի գարձնելը։

Մարզն ընտանի կենդանիներ գարձրեց լոկ այնպիսիներին, վորոնք գերության մեջ վոչ միայն հեշտությամբ սովորում եյին և լավ բազմանում, այլև այս կամ այն յեղանակով կարող եյին ողտակար լինել նրան։ Չե՞ վոր կենդանիներին ձեռնասուն գարձնելը մարզու համար հեշտ գործ չեր։ Նո ստիպված եր ծախսել՝ բավականին յենանգ, ժամանակ ու հոգատարություն։ Նրանց հարկավոր եր կերակրել, և հետեաբար պետք եր ձեռք բերել նրանց համար կեր, բավականաչափ պաշար պատրաստել, պաշտպանել նրանց գիշատիչների հարձակումներից, հոգ տանել նրանց ոթեաների մասին և այլն։ Հենց վոր մարզն իրեն համար ողտակար կենդանիներ ընտրեց և սկսեց նրանց մշտապես իր մոտ պահել, ձեռնարկեց նրանց բուժանելու, բազմացնելու գործին, —մի խոսքով, յերբ նա վորսորդի վիճակից հետզետե հասավ անասնապահության, —այդ հոգսերն ել ավելի շատացան և շուտով խլեցին նրա ամբողջ ժամանակը։ Ընտանի կենդանիներով զբաղվելու հանդամանքը հարկադրեց նրան հրաժարվել վորսորդությունից, վորի հաջողությունը միշտ կախված է պատահականությունից։ այժմ նա արգեն մշտապես բավականաչափ պաշար ունի շնորհիվ իր նախիրների։

Մարզու սովորեցրած կենդանիներից առաջին բնանի կենդանին ամենայն հավանականությամբ շունեն եր, և նրա բնակելացումը խոշոր փոփոխություն չմրցրեց նախամարդու անտեսական կյանքում, —նո դարձյալ վորսորդ մնաց։

Շների բնականիքի վայրենի ներկայացուցիչները՝ գայլերը, շնազայիշերը վոչ պակաս անախորժություն են պատճառել նախամարդ վորսորդին։ Նրանց—այդ գիշատիչների և մարզու վորսի աստրկան միենալուն եր։ Նրանք մարզու մրցակիցներն եյին։ Շատ կարելի յե, վոր նրանք միենույն ժամանակ հանդիսում եյին և մարզու վորսը գերես շատ ցեղեր այժմ ել չեն խորշում

վայրի չների մսից : Ընտելացնելով վայրի չներին, մարդը չի կարող չնկատել, վոր նրանք ոժաված են վորս անելու մեծ ընդունակություններով : Շունը, վոր վազքի ժամանակ հոգնել չգիտե, հեշտությամբ հասնում է ամենարագավազ գազանին և մինչեւ անգամ անցնում նրանից . նա ունի մեծ զգայություն և հեշտ կերպով սովորում է վորսորդության ամեն տեսակ խորամանկության և ճարպիության : Զարմանալի չէ, վոր նախամարդ վորսորդն աշխատեց նրան ոգտագործել և հանձինս նրա ունեցավ վորսորդության յեռանդուն ողնական :

Այնուհետեւ սովորեցրած և ընտանեցրած շունը շուտով դարձավ մարդու նաև իսկական ընկերը, նրա ընտանիքի և բնակավայրի հավատարիմ պահակն ու սպասավորը : Պետք է կարծել, վոր արդեն շատ ու շատ տարիներ առաջ, հյուսիսի ամենահեռավոր մասերում, ուր խորախոր ձյուներն արգելք են հանդիսանում ուրիշ կենդանիների միջոցով տեղափոխություններ կատարել, շունը մարդուն ոգնության յեկավ տարածությունները հաղթահարելու համար : Թեթևաշարժ սահնակները՝ լծված չների մի տասնյակով ձիու արագությամբ որտես են հյուսիսի ձյան անծայրածիր դաշտերով :

Մարդու վիճակի նկատմամբ ավելի նշանավոր ազդեցություն ունեցավ խոշոր ընտանի կենդանիների՝ ձիերի և յեղյուրավոր անասունների՝ ընտելացումը : Նրանց ոգնությամբ մարդը կարողացավ փոխել իր ապրելու յեղանակը և սկսել այլ միջոցներով իր գոյության համար պարեն հայթայթել :

Զին ամենից առաջ նպաստեց մարդուն, վոր վերջինս հեշտությամբ տեղափոխվի մի վայրից մի այլ վայր՝ և իր կյանքի համար ավելի հարմար տեղ վորոնի : Յեղան հետ մեկանել ձին ոգնեց նրան ավելի հաջող կերպով հոդագործությամբ զբաղվելու :

Կասկած չկա, վոր ուտելու բույսեր ցանելու համար՝ հողի մշակության առաջին փորձերը մարդն արել և իր սեփական ուժերով : Յեվ հենց այժմ ել շատ վայրենի յեղեր, վորոնք ապրում են տաք յերկրներում,

հողը մշակում են բահով ու թիով, տոանց ընտանի կենդանիների ոգնության : Սակայն այդ հնարավոր և միայն այն վայրերում, ուր կարող են աճել առատ բերք բերող բույսերը, —ինչպես որինակ՝ յեգիպտացորենը, բրինձը, կորեկը : Այս բույսերով ցանված փոքրիկ դաշտն արդեն կարող է կերակրել մարդուն : Այնազ, ուր կլիման ցուրտ է և կարելի յե մշակել միայն ավելի պակաս ոգտավետ բույսեր, մարդիկ ստիպված են մշակել ու ցանել ընդարձակ, մեծ տարածություններ : Այդ բանի համար մարդկային ուժն արդեն անրավարար է, և ոգնել կարող է նրան միայն գութանը, լծված ձին կամ մի գույզ յեղը :

Չորքոտանի ոգնականները նպաստեցին մարդուն, վոր նա իր յերկրագործական տնտեսությունն ընդարձակի և բարելավի : Նրանց աշխատանքի չնորհիվ մարդը վարում, փափկացնում եր հողը, այնպես վոր բույսերը լավ աճում եյին ու տալիս բավականաչափ բերք : Ճշմարիտ և, սակայն, ինչպես հիշեցինք վերեվում, վոր այդ ոգնությունը մարդու վրա ծրի չեր նստում :

Նա հարկադրված էր հոգ տաներու իր ոգնականների մասին, հետեւելու նրանց, պատրիստել նրանց համար ձմեռվա կեր, շինել նրանց համար ցրտից պատապարելու բնակարան :

Այսպիսով ընտանի կենդանիների և կուրուրական բույսերի մշակման չնորհիվ կամաց-կամաց ստեղծվում է այն յերկրագործական տնտեսությունը, վորը մինչեւ այսոր ել հանդիսանում է մեր կյանքի գլխավոր հիմքը : Հենց ներկայումս ել հատկապես ուռւական հարթություններում, բնակչության գլխավոր պարագմունքը՝ անասնապահության հետ կապված հողագործությունն է : Անասունը տնտեսությանը տալիս է իր ուժը և դաշտերի պարաբռացմանը նպաստող իր ազբը :

Սակայն ընտանի կենդանիների ընտելացումն ամենուրեք առաջ չբերեց հողագործության զարգացում :

Ընդարձակ տափաստաններում, ուր յերաշտի յենթակա խիտ խոտեր կան, հեշտ և ապրել մեն-մենակ

անասնաբուծական տնտեսությամբ։ Յեկ շատ ժողովուրդներ, վորոնք ապրում եյին այդպիսի տափառաններում, անցան ապրուստի այդ յեղանակին։

Այս պայմաններում սակայն անասնապահը պետք է լինի թափառաշրջիկ։ Պահելով հսկայական հոտեր, վոր տալիս էյին մարդուն՝ միս, մորթի, բուրդ, ձարպ և այլ կենդանի մթերքներ, նա ամբողջովին կապված էր կենդանիների հետ և հարկադրված եր հետեւ նրանց։ Եախիքներն արագորեն ուտում եյին խոտը և ստիպված էյին անցնելու կերպվ առատ նոր տարածություններ։ Պետք եր նրանց քչել մի տեղից մի այլ տեղ։

Ներկա վաչկառուն անասնապահները մշտական քոչեր են կազմակերպում վորոշ և միանդամ ընդմիջուրներած ճանապարհով։ Ամենից շատ նրանք գարնունն իրենց հոտերը քշում են տափառանները, իսկ ապա՝ ամառը, յերբ տափառանը խանձվում—մնձվում և, քշում են նրանց սարերը և այստեղ կերակրում լինային անուշ արոտավ։ Աշխանք նրանք կրկին գաշտ են իջնում ու փնտում են ձմեռելու այնպիսի վայրեր, ուր քիչ ծածկվելին ձյունով, վորպեսզի անասունները ձմեռն ել կարողանային ձյոն ստվանի տակից իրենց համար կեր ձարել։

Այսպիսի կյանք են վարում որինակ թուրքեստանում մեր վաչկառուն զրբգրիները։

Այսպիսավ ժամանակակից մարդու զոյության յերկու գլխավոր ու հիմնական յեղանակները—յերկրագործությունն ու անասնապահությունը—տառչացան բացառապես ընտանի կենդանիների բնակելացման և այն ողնության շնորհիվ, վոր ցույց եյին տալիս նրանք մարդուն՝ նրա կյանքի կովամ։

Բացի զրանից, արդյունաբերությունն ել վորոշ չափվ կախված է ընտանի կենդանիներից։ Ուզգակի, թե անուղղակի կերպով նրանք տալիս են այն հում նյութի, վորը պետք է զալիս արդյունաբերության շատ ճյուղի։ Կաչկողծարաններում մորթուց մշակում են կաշի, ձարպից՝ պատրաստվում են մոմ և ոճառ, վոսկորները տալիս են՝ սոսինձ, վոսկորյա ածուխ ու ֆոս-

ֆոր, արյունից ձեռք և բերվում ալբումին, բուրգն ել զործադրվում է բրդեղեն կտորներ պատրաստելու համար։ Համարյա բուսական բոլոր մթերքներն ստացվում են ընտանի կենդանիների մասնակցությամբ, և, հետեւարար, մեր ամբողջ կյանքը թվում է, թե սերտուրնեն կապված է նրանց հետ։

Մենք ընտանի կենդանիներին շարունակ մեր շուրջը տեսնելով, այնպես ենք սովորել նրանց, վոր նրանց վրա քիչ ուշադրություն ենք դարձնում։ Մեզ այնպես պարզ, հասարակ ու բնական է յերեւմ այն հանդամանքը, վոր ձին մեզ տանում է, կոմը կաթ և տալիս, վոչխարը՝ բուրդ, վոր մեզ թվում է, թե այլ կերպ ել լինել չեր կարող։

Բայց վորպեսզի զնահատենք մարդուն տված կենդանիների հսկայական բոլոր սովուր, հարկավոր և մի բոսկ յենթագրել, թե ի՞նչ զրություն կատեղծվի, յեթե հանկարծ վորեւ պատահարի հետեւանքով զրկվենք բոլոր մեր չորբանակի բարեկամներից և ողնականներից։ Ամենից առաջ արգեն անհնարին կլիներ հողի մրցակությունը, քանի վոր այժմ հսկայական հողի մի չնչին մասն և միտյն մշակում մարդու կամ մեքենայի աշխատանքով։ Ամբողջ յերկրագողի վրա կթագավարեր սարսափելի սովոր։ Արգյունաբերությունը կզրկվեր ամբողջովին հում նյութից, վորը նա վերամշակում է, և կանգ կանելին բոլոր զործարաններն ու ֆարբիկանները։ Ապրանքները աեղափոխելու անհնարինությունից՝ կզարդարեր և տուեառըր։ Մի խոսքով այդ կլիներ մի համաշխարհային աղետ, վորի հետեւանքով ժամանակակից քաղաքակրթության բոլոր հիմքերը կիսորսակվելին և մարդկությունը բարիս բուն նշանակությամբ կմնար տուանց մի կտոր հացի։

Ահավասիկ և մինչեւ այսոր ել մարդու կերանքը սերտուն կապված է ընտանի կենդանիների կյանքի հետ։ Նրանից ամենից առաջ մարդն ստանում է լրացուցիչ բանվորական ույժ։ Ծնառնի կենդանիների չնորհիվ նրա սեփական ուժերը տասնապատկվեցին։ Այսուհետեւ ընտանի կենդանիները տալիս են նաև նրա սննդի նշա-

նակալից մասը։ Բացի վորսորդությունից ու ձկնորսությունից ստացած մթերքներից՝ մարդը կերակրվում է սննդարարության տեսակետից վերին աստիճանի գնահատելի կերակրով, վոր տալիս են նրան խոշոր ու մանր յեղջուրավոր անասունները և ընտանի թռչունները։

Մարդու հագուստն ու վոտնամանը նույնպես ստացվում է անասնապահության մթերքներից։

Յեղջուրից ու վոսկորից շինված զանազան բաները, սապոնն ու մոմը, սոսինձը, վոր գործադրվում է տախտակներն իրար կացնելու համար (ատաղձագործություն), մազը, վոր գործադրվում է կոհճի պետքերի համար, խոզանակների համար՝ կոշտ մազը, բարձերի և փետրաշեն վերմակների համար բմբուլը և վերջապես դաշտերի պարարտացման համար ամենալավ միջոցը՝ աղբը, ահա այս բոլորը տալիս են մեզ մեր ընտանի կենդանիները։

Չի կարելի չնչել և այն մեծ բավականությունները, վոր տալիս են մեզ կենդանիները։ Մարդու համար մեծ բախտավորություն ե՝ իր կողքին ունենալ հավատարիմ, նվիրված բարեկամներ, վորոնք միշտ պատրաստ են իրենց կյանքը զոհելու իրենց տիրոջ համար։ Մարդու համար մեծ ուրախություն ե, կյանքի գեղեցկացում ե, յերբ նո դիտում ե մեր չորքուանի և թևավոր բարեկամների կյանքը, սովորույթը, բնավորությունը և ուրախ չարաձճիությունները։

Ընտանի կենդանիների նկատմամբ չի կարելի ժրիստել, վոր նրանք զանազան հանդամանքներում համակերպվելու ընդունակություն ունեն, դատելու հասկացողություն, —մի խոսքով այն, ինչ վոր կազմում է մարդու խելքի գլխավոր հիմքը։ Ճիշտ ե, շատ անդամ մենք չափազանցում ենք նրանց խելքն ու ըմբռնողությունը։ Նրանց վարմունքը մեր արշինով ենք չափում, վերագրում ենք նրանց զուտ մարդկային զգացում ու գրգիռ—վոր նրանք չունեն, սակայն իրոք շունը, կատուն, ձին, մարդու աղջեցության ներքո և մշտական նրան մոտիկ լինելու շնորհիվ, բավականաչափ զարդա-

ցրել են իրենց ընդունակությունները և շատ անդամ դարձացնում են մեզ դրանցով։

Յեկ այսպես ընտանի կենդանիները վոչ միայն մեր ոգնականներն են, կերակրողները, այլ նաև մեր բարեկամները—ընկերներն են, վորոնք կյանքում մեզ տալիս են շատ բերկրանք ու մտքի պաշտը, յեթե նրանց մոտիկից ծանոթանանք։

### ՀԱՐՑԵՐ ՈՒ ԹԵՄՍԱՆԵՐ

Ի՞նչպես եր ապրում նախամարդն առանց ընտանի կենդանիների։

Ի՞չպիսի վաստակ եր ստանում հողագործն ընտանի կենդանիներից։

Անամնապահներն ինչո՞ւ պետք է քոչվորի կրանք վարելին։

Քոչվոր-անասնապահներին ընտանի կենդանիներն ինչ են տալիս, և նրանք ինչպես են ապրում առանց բուլսերի մշակման։

Ժամանակակից մարդն առանց ընտանի կենդանիների կարող է ապրել, և ի՞նչով կարելի լիր նրանց փոխարինել։

## II. ՄԱՐԴՆ ԻՆՉՊԵՍ ԵՐ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ՅԵՎ ԲԱԶՄԱՑՆՈՒՄ ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ

Ընտանի կենդանիների մէծ ժամափն—հատկապես նրանց, վորոնք շատ տարածված են ու պատահում են ամենուրեք, —սովորեցրել և ընտանի յէ դարձրել մարզն այնքան հին ժամանակներում, վոր վոչ մի պատմական տեղեկություն և մինչեւ անդամ վորեե ավանդություն այդ ժամափն չի պահպանվել:

Հարկավ վոչ մի կասկած չի կարող լինել այն ժամափն, վոր բոլոր ընտանի կենդանիներն առաջ են յեկել վայրենի կենդանիներից, վորոնց սովորեցրել և նախամարդր:

Բայց յեթե հարց արվի, թե հատկապես վո՞ր վայնու կենդանուց ե ծագել չունը, ձին, կովը, —ապա զբան պատասխանելի հեշտ չէ: Մեր ամենասովորական բնանի կենդանիների ծագումը չի կարելի տսել, վոր վերջնականապես պարզված և, չնայած վոր կենդանիների ծագման խնդրի լուծման վրա գիտնականներն առագին ջանք ու աշխատանք են թափել:

Այդ բանի մի քանի պատճառ ունի: Նոխ և առաջ չենց վայրենի կենդանիներն են հեռավոր ժամանակներից սկսած խիստ փոփոխվել են: Նախամարդուն ըբազապատող կենդանիներից շատերը վերացել են, և մենք նրանց գոյության մասին իմանում ենք միայն հանածո մնացորդներից: Իսկ մյուսները մարդկանց կողմից դռւրս են վանված և միայն տեղ-տեղ անընտեկելի յերկրում են պատահում:

Այնուհետեւ ընտանի կենդանիներն ել չեն մնացել այն զրությամբ, ինչպես վոր եյին նրանք այն ժամանակ, յերբ մարդը նրանց սովորեցնում և ընտելացնում եր: Նրանք բաժանվեցին բազմաթիվ ցեղերի, վորոնք

խիստ կերպով զանազանվում եյին միմյանցից, և ընդարձակորեն տարածվեցին յերկրագնդի վրա: Թէ այդ ցեղերից վո՞րն ե հատկապես նախնիներին մոտ, —շատ գժվար ե լինում վորոշել:

Վերջապես, շատ կարելի յէ, վոր բնատանի կենդանիներից վամանք առաջացել են վո՞չ թե վորեե մեկ վայրենի նախորդից, այլ մի քանի տարրեր և մինչեւ անգամ զանազան վայրերում տալրող նախորդներից: Տեղափոխվելով մարդու հետ միասին՝ մի տեղից մի այլ տեղ, նրանք խառնվել են տեղական ցեղերի հետ, կազմել խառն ցեղեր, և այսպիսով տվելի ևս գժվարացրել ձանաչելու խնդիրը, թե ցեղերից վո՞րն ե ավելի մոտ սկրզնական վայրենի նախորդներին:

Այնուամենայնիվ գիտնականները մանրամասնորեն հետազոտելով բնատանի կենդանիների կազմվածքը՝ նրանց միմյանց հետ համեմատելով, ուսումնասիրելով հին պատմական հիշատակարանները, հուշարձանները, նկարներն ու քանդակագործական արտադրությունները և պեղումների միջոցով զտած բնատանի կենդանիների վասկորները համեմատելով այժմյանների կմախքների հետ—աշխատում են բնատանի կենդանիների ծագման հարցը վարոշել և շատ ու քիչ հաջող կերպով վճռել այդ խնդիրը:

Մենք այժմ չենք զբաղվի առանձին բնատանի կենդանիների ծագման պատմությամբ, —որա մասին կխռում է հետո տառնձին գլուխներում: Փորձենք նայելու այն հարցը, թե ի՞նչպես առհասարակ առաջացավ կենդանիների ընտանեցումը և ի՞նչ միջոցներով մարդը նրանցից առաջացրեց զանազան տեսակները:

Նախորդ գլխում մենք արդեն տեսանք, թե ի՞նչպես և ինչո՞ւ յեր նախամարդն ընտելացրել կենդանիներին:

Անտառներում և անտապատներում ապրող ու քարանձավներում բնակվող նախամարդ վորորդը, պետք ե կարծել, վոր վարձել և ընտելացնելու այն բոլոր զագաններին ու թռչուններին, վորոնց հետապնդում եր վորասլու համար, —նա այսպիսով կարող եր ապահովվել մոի մշտական պաշարով: Բայց բոլոր կենդա-

նիներն ել միատեսակ հեշտությամբ ձեռնասուն չեյին գառնում և հավասարապես ել ձեռնուռ չեյին:

Նրանցից վոչ բոլորն եյին հավասարապես ազատ ըազմանում գերության մեջ,—շատ վայրի կենդանիներ այդ վիճակում սերունդ չեն տալիս: Այսպիսով մի քանի գեղքերում ընտելացումը հաջող է յեղել, իսկ ուրիշ գեղքերում ել մարդն անհաջողության և հանդիպել: Այդ բանի համար կան մինչեւ անդամ մի քանի պատմական որինակներ: Այսպես՝ հին յեղիպտացիները ջանացին բազմացնել ձահճային լուսանը (րայս), վորը պետք եր գալիս նրանց թուզուններ վորսալու համար: Այդ կենդանին, սակայն, դժվար եր սովորում, և չեր կարի յետ-սովորեցնել նրան, վորպեսզի ընտանի կենդանիների վրա չհարձակի: Լուսանը և չդարձավ ընտանի կենդանի: Այսպես միայն ամենավերջին ժամանակները հաջողվեց վորուշափով բնտելացնել նոտե թանկադին մորթի ունեցող գազաններին՝ աղվեսներին, սպիտակ աղվեսներին, Սիրիքի սամույրներին (Mustela zibellina): Սրանք այնուամենայնիվ գենես խակական ընտանի կենդանիներ չեն դարձել, —նրանց կարիք ե լինում՝ պահել աղվամազ կենդանիների առանձին հատուկ աղարակներում, պահպանել չափազանց աղմուկից ու անհանդըստությունից, ամենամեծ խնամքով սննդել հատուկ կերակրով, և ընդհանրապես հետեւ նրանց շատ զգուշութեն նրա համար, վոր նրանք չառապեն գիրությունից և սերունդ տան:

Շատ հասկանալի յէ, վոր մարդս՝ ինչպես կենդանիների ընտրության ժամանակ, այնպես և նրանց ընտանի դարձնելիս, բնավ յերբեք անոտե չի առել իր ոգուար: Նա սպասել է իր ուժերը և աշխատանքը լոկ այն կենդանիների բուժման համար, վոր այս կամ այն տեսակիտից նրան ողտակար են յեղել:

Այս ոգտակարության հանդամանքը մարդն աչքաթող չի արել և հետագայում, յերբ նա անասնապահ դառնալով սկսեց բազմացնել կենդանիները: Լինելով բանական եյակ՝ մարդս կենդանիների բազմացման ժամանակ նշում եր նրանց մեջ այնպիսիներին, վոր նրա

համար առանձնապես ոգտակար եյին, վոր տալիս եյին ավելի միս կամ ձարպ, վոր ավելի ուժեղ ու դիմաց կուն եյին, կամ շատ ավելի հնազանդ եյին և յենթարկ-վոզ սովորեցնելու ժամանակ: Այդպիսիներին նա թողնում եր իր մոտ, հնարավորություն եր տալիս նրանց բազմանալու, իսկ ուրիշներին, վոր ավելի քիչ եյին բավարարում նրա պահանջներին—մարդը բնաջինջ եր անում, ողտագործում եր իրեւ կերակուր:

Այդպիսով նախ և առաջ, պետք ե կարծել, վոր մարդը բոլորովին անդիտակցորեն առաջացրեց այն, վոր կոչվում է արհեստական ընտրանք: Նա ընտրում եր այնպիսի կենդանիներ, վոր ավելի համապատասխան եյին նրա նպատակներին, և նրանց բազմանալու համար համարավորություն եր ստեղծում:

Կենդանիների սերունդների մեջ միշտ պատահում են այնպիսիները, վոր վորոշ չափով տարբերվում են իրենց հատկություններով, —վոմանք լինում են խոչըր, ուրիշները՝ մանր, վոմանք՝ ուժեղ, ուրիշները՝ թույլ, վոմանք ունենում են յերկար բուրդ, ուրիշները՝ կործ, և այսպես միենույն եղի ծագուկների մեջ յուրաքանչյուր հատկություն կերպարանափոխվում է, —այն կարող է, ինչպես ասում են իր փոփոխակներն ունենալ: Այսպիսով սերունդների միջից միշտ կարելի ե ընտրել ըստ ճաշակի, վերցնել գրանցից այնպիսիներին, վորոնք համապատասխան են այս կամ այն պահանջին: Յեթե մարդ նրանց իր մուա պահի, զարգացնի և հնարավորություն առ նրանց բազմանալու, այն ժամանակ շատ կարելի յէ վոր նրանք կազորդեն իրենց հետարգներին մարդու համար ավելի ողտակար հատկություններ: Հատկապես այդ տեղի կունենա այն գեղքում, յերբ բազմացնելու համար ընտրեն ավյալ հատկություններով ուժաված և՛ հայր և՛ մայր, —որինակ ավելի ուժեղներին կամ նրանց, վորոնք ունեն ավելի յերկար ու խիտ բուրդ:

Մի շաբաթ սերունդների նկատմամբ շարունակ այդպես վարկելով, հնարավորություն տալով նրանց բազմանալու ցանկալի հատկություններով և վոչնչացնելով նրանց, վորոնք այդպիսի հատկություններ չունեն, կա-



բելի կլինի առաջացնել այնպիսի սերտնեղ, վորն արդւն միշտ կամ, համենայն զեպս, մեծ մասամբ կծնի տվյալ ցանկալի հատկություններով ձագուկներ:

Կենդանաբույժները հիմա յել են այսպես վարդում, յերբ ուզում են առաջացնել վորեւ նոր, մինչև այժմ չպատահած հատկություններով սերունդ: Նրանք չառ տասնյակ տարիներ համառորեն զրազվում են բազմացնելու գործով և կենդանիներ են ընտրում, ընտրում են նրանց ցեղերի միջից ավելի համապատասխանները և դարձյալ հարկադրում նրանց պատղաբերելու: Քիչ-քիչ մի քանի սերունդների ընթացքում, ցեղը կատարելագործվում է և ձեռք բերում մարդու համար խիստ կարեոր, ցանկալի հատկություններ:

Վոչ մի տարակուսանք չի կարող լինել, վոր այդպես եր վարդում և նախամարդը: Ակզրում՝ նա հավանորեն առանց վորեւ դիտավորության ընտրում եր այնպիսի կենդանիներ և իր մոտ պահում, վոր այս կամ այն հատկությամբ նրան ավելի եյին դյուր գալիս: Հետազայում նա չեր կարող չնկատել, վոր ընտրյալ կենդանիների սերունդների մեջ ավելի ձագուկներ կան իր համար կարեոր հատկություններով, և հաճախ այդ հատկությունները կարծես թե նույնիսկ ուժեղանում, լավանում, ամրանում են: Այնուհետև առաջնորդվելով իր պահանջների և իր ճաշակի համաձայն՝ նա արդեն սկսեց ավելի դիտակցորեն ընտրություն անել:

Այսպիսով մարդու պահած ընտանի կենդանիներից հաջողվեց առաջացնել բազմաթիվ ցեղեր, —վոր զանազանվում են միմյանցից ամենաբազմապիսի առանձնահատկություններով. —մարմնի չափով ու ձեռվ, մոխանակով ու զարգացմամբ, բրդի գույնով, յերկարությամբ և այլ հատկություններով, վերջապես մինչև անդամ բնավորությամբ, բնածին սովորույթներով (բնազդներով) և մտավոր ընդունակություններով:

Վոր մարդս ընտանի կենդանիներից սերունդներ ուսացնելու գործով զրազվել ե անհիշելի ժամանակներից, պարզ ե, որինակ, այն հանգամանքներից, վոր մեր թվականությունից 2-3000 տարի առաջ յեղիպտա-

կան հուշարձանների վրա կարելի յե գտնել արդեն չների չորս տեսակի պատկերներ. բացի գրանից նրանց մեջ կան և այնպիսի բնորոշներ՝ ինչպիսիք են—բարակներն ու կարճասրունք չները: Պարզ ե, վոր նրանք այն ժամանակվանից ել դեռ չառ վաղ են առաջացել: Ճիշտ այդպես՝ այնտեղ նկարված են յեղների յերկու տեսակ—մեկը յերկար յեղջյուրով, մյուսը՝ բոլորովին անեղջյուր:

Մարդու ձեռք բերած մի քանի տեսակներն աչքի յեն ընկնում արտասովոր զիմացկությամբ և հարատեսությամբ,—այդպես եյին զեռևս յեղիպտացիների կողմից ձեռք բերված նույն կարճասրունք չները և մի քանի հազարամյակ մեզանից առաջ գոյություն ունեցած ու մինչև այժմս ել համարյա անփոփոխ մնացած տիբետական դոգերը—գամփոները: Այսպես և Սարդինիա կղզու վրա գտնված ե յեղների մի տեսակ, վոր չառ նման ե հին Յեղիպտոսի տեսակներից մեկին. Հարեշտանում դանված են յեղիպտական հուշարձանների յերկարեղջյուր յեղներ, իսկ նկեր գետի հովտում գտնվան են հին յեղիպտական վոչխարներ, վորոնց մասին յերկար ժամանակ կարծում եյին, թե չքացել են:

Այնուամենայնիվ տեսակների այդպիսի տոկունությունը բացառություն է: Հաճախ կարելի յե պատահել այնպիսի ցեղերի, վոր առաջացել են պատմական ժամանակներում և ստեղծվել մինչև անդամ բավական կարծ ժամանակամիջոցում:

Ընտանի կենդանիների ծագմանը նվիրված Դարվինի գրքում առաջ են բերվում մի շարք գեպքեր, յերբ հաջողվել է մի քանի տարվա ընթացքում ընտանի կենդանիների և թուչուների առանձնահատկությունները փոփոխել: Այսպես՝ յերբ Անգլիայի հավաքույժների մոտ սուսացագավ այն մողան, վոր պետք եր իսպանական աքաղաղի կատարն անպատճառ ուղղահայաց կանգներ, հինգ տարուց հետո արգեն բոլոր տոհմիկ թուչուների կատարներն այդպես եյին: Ճիշտ այն յեղանակով—այդպես կոչված լեհական հավերի վերաբերմամբ՝ հաջողվել է մի քանի տարվա ընթացքում բոլորովին վերաց-

նել նրանց կատարները։ Աղավնի սիրողներից մեկը՝ վորպեսզի բոլորովին սպիտակ գլխով տուրման աղավնու տեսակն ստանա, գործադրեց ընդամենը 13 տարի։

Մարդու առաջացրած ընտանի կենդանիների ցեղերը յերբեմն շատ խիստ կերպով զանազանվում են միմյանցից, —արժե հիշել հենց բոլոնկի (բրդոտ յերկարականչ չնիկ) և դանիական գոգերի (գամփո) միջև յեղած տարբերությունը կամ թե չե արաբական ձիերի և բիտյուգի (գիմացկուն ձի)։ Այս տարբերությունները հաճախ ավելի աչքի ընկնող են, քան վայրի կենդանիների զանազան մոռափկ ցեղերի միջև յեղած տարբերությունը։ Սակայն ընտանի կենդանիների ձեռք բերած բոլոր այդ առանձնահատկությունները քիչ են գիմացկուն, — նըրանք հաստատուն չեն և հեշտությամբ կորչում են, հենց վոր ընտանիքն ընդհատվում է։ Վորպեսզի ցեղը նույն կերպով պահպանվի, ինչպես վոր կա, հարկավոր և շարունակ հետեւ կենդանիներին, ցույց տալ նրանց հոգատար վերաբերմունք և այնուհետեւ հսկել, վորպեսզի ընտրվեն ազնվացեղ ծնողներ, այսինքն այնպիսիները, վորոնք սժաված լինեն տվյալ ցեղին հատուկ բոլոր նշաններով։ Լավ կենդանաբայցն ընտվ չի բաղմացնում կենդանիներին պատահականորեն, այլ միշտ ընտրում և զուգախառնում ե լավ սերունդ առաջնողներին։ Յեթե այլ կերպ են վարդում, այն ժամանակ ցեղերը, ինչպես ասում են, այլասերվում են։

Այսպես ել, յեթե ընտանի կենդանիներին աղատություն տանք, դադարենք նրանց վրա հոգ տանելուց և չհետեւնք նրանց բազմունալուն, —այն ժամանակ ցեղի նշաններն անհետանում և հարթվում են. կենդանիներն սկսում են բավական շուտափույթ նմանվել իրենց վայրենի նախնիքներին և ազգակիցներին։

Ընտանի կենդանիների այսպիսի վայրենացումը և մարդու միջոցով առաջացրած տեսակների այլասերումը հաճախ և գիտվել, հատկապես անմարզաբնակ կղզիների վրա, ուր կենդանիները պատահմամբ մնացել են առանց մարդու հոգատարության։ Եղեյան Արշիպելագի շատ կղզիների վրա (Հունաստանի և Փոքր Ասիայի միջև)՝

գտնվում են վայրի այծեր, վորոնք առաջացել են ընտանիների վայրենացումից։ Սարդինիա կղզու վրա պատահում են վայրենացած կատուներ, վորոնք նման են վայրի կատուների, և վայրենացած խոզերի, վորոնք հիշեցնում են վարպեներին։ Շունը վայրենացած դրությամբ ապրում ե սովորաբար մարդու բնակության մոտիկ։ Այսպես և այն ձիերը, վորոնք սպանացիները 16-րդ դարում բերել եյին Հարավային Ամերիկա, վայրենացան ամերիկյան տափաստաններում — պամպասներում — և բազմացան այնտեղ այն աստիճան, վոր սկսեցին արդեն վնաս պատճառել, և կարիք յեղափմտածելու նրանց վոչնչացման մասին։ Այսպիսի գեպք տեղի ունեցավ և Կամչատկայում։ այնտեղ՝ Կյուչևսկի լեռնագագաթի (սովկա) մոտերը, Տոլբաչիկ գյուղի մոտ գտնվում ե բավական ընդարձակ տարածություն, ուր կիմայական առանձնահատուկ պայմանների շնորհիք թափվում ե քիչ քանակությամբ ձյուն, և ձիերը կարող են տարին բոլոր՝ ապրել արածելով։

Այնտեղ արդեն շատ ժամանակներից ի վեր ուսուգաղթականների բերած ձիերը վայրենացան և մի քանի յերամակ կազմելով ապրում եյին անտառներում ու չեյին թողնում, վոր մարդն իրենց մոտենա։ Հաճախ պատահում ե, վոր այդ ձիերը՝ հարման գյուղերի ընտանիներին դեպի իրենց եյին գրավում։

Այսպիսով, յեթե ընտանի կենդանիների նոր աւագաները համեմատաբար հեշտ են ստացվում, բայց և հաճախ նույնպիսի հեշտությամբ ել նըրանք կորցնում են իրենց բոլոր ընտրությամբ ձեռք բերած առանձնահատկությունները, խզում են մարդու հետ ունեցած լինկերական կապը, դառնում են կրկին վայրենիներ ու մինչև անդամ վերստին իրենց վայրի նախորդների տեսքն են ստանում։

Հարկավ՝ այդ նըրանով ե բացարվում, վոր կարծ ժամանակվա ընթացքում արհեստական ընտրանքով ստացված հատկանիշերը հարկավոր չափով հաստատուն կերպով չեն յուրացվում։ Կենդանիների վայրենի տե-

սակների հատկանիշներն ու առանձնահատկությունները  
կազմվել են մի քանի հազարամյակների ընթացքում և  
դրա համար ել նրանք ավելի դիմացկուն են, հաստա-  
տուն:

### ՀԱՐՑԵՐ ՈՒ ԹԵՄԱՆԵՐ

Մարդն ի՞նչպես ե սովորեցնում վայրի կենդանի-  
ներին:

Ի՞նչ բան է արհեստական բնուրանքը:

Ի՞նչ հանգամանքներից ե կախված ընտանի կենդա-  
նիների վայրենացումը:

—————

### III. ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՆ ԻՆՉՈՎ ԵՆ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ՎԱՅՐԻՆԵՐԻՑ

Ինչպես տեսանք մարդս սովորեցրեց ընտանի կեն-  
դանիներին ի նկատի ունենալով իր ողուար: Նա աշխա-  
տում եր նրանցից ստանալ այնպիսի առանձնահատկու-  
թյուններ, վոր նրա համար ողտափետ լինելին այս կամ  
այն տեսակետից: Սակայն նա զանազան բնուանի կեն-  
դանիներին գործադրում եր տարրեր նպատակների հա-  
մար, դրա համար ել մարդուն հետաքրքրող հատկու-  
թյունները շատ բազմազան են:

Յեթե կենդանին, ինչպես որինակ ձին, գործադրու-  
մում ե հեծնելու համար, այն ժամանակ կարեոր ե նրա  
արագընթացությունը և դիմացկունությունը, կամ  
բեռներ փոխադրելու համար՝ ույժը: Յեթե կենդանին  
նշանակված ե իբրև մասցու, կերակրի համար, այն ժա-  
մանակ հատկապես գնահատելի յեն այն ցեղերը, վոր  
տալիս են առատ միս. յեթե կենդանուց տանվում ե  
բուրդը, ինչպես որինակ՝ վոչխարինը, այն ժամանակ  
հատուկ ուշադրություն են զարձնում նրա յերկայնու-  
թյան, խոռության և նրբության վրա:

Ընտանի կենդանիներն իրենց այդ բոլոր հատկու-  
թյուններով, հարկավ, խիստ կերպով տարրերվում են  
իրենց վայրի ցեղակիցներից, —նրանցից յուրաքանչյու-  
րի մեջ զարդացել են այն առանձնահատկությունները,  
վոր կարեոր են մարդու համար:

Ընտանի կենդանիների մեջ պատահում են, ի միջի  
այլոց և այնպիսի տարրերություններ, վոր մարդու հա-  
մար սովորաբար քիչ նշանակություն ունին, —ինչպես  
որինակ՝ հենց գույնը:

Հայտնի յեւ, վոր վայրի կենդանիներն ունեն սովորաբար այնպիսի գույն, վոր շատ կամ քիչ չափավ համապատասխան և ամբողջ ըրջապատին և լուսավորության պայմաններին։ Այսպես՝ ամենից առաջնարանց մասին ասում են, վոր ունեն յուրահատուկ որենք. — կենդանու մեջքը կամ մարմնի վերին մասը միշտ մութ գույնով ե՝ այս կամ այն սովերով, իսկ ներքեւի մասը, վորը, վոր գեղի գետին և ուղղված, բաց գույնով ե, հաճախ մինչև անգամ սպիտակ։

Այս որենքը գտել ե անգլիացի գեղագետ Տայերը և դրա համար ել այն ստացել է «Տայերի որենք» կոչումը։ Նույն այդ գեղագետը տվել ե միանդամայն ճիշտ բացարություն այդ որենքի մասին. — ցերեկվա յուրա միշտ ընկնում ե վերելից և լուսավորելով կենդանու մութ մեջքը, դարձնում ե այն ավելի պայծառ։ Միենույն ժամանակ փորի կողմը միշտ լինում է սովերի մեջ, ուստի և յերեւում ե ավելի մթին։ Այսպիսով յեթե կենդանուն նայենք վորեւ կողմից, ինչպես սովորաբար նայում են նրան փնտող թշնամիները, այն ժամանակ, չնորհիվ նրա այդպիսի գունավորման, թվում ե թե ներկված ե ըրջապատող Փոնի վրա միջակ, վոչ շատ մութ և վոչ ել շատ բաց գույնով։ Հետեաբար այսպիսի գունավորմամբ կենդանիներն ավելի լավ են ծածկվում ըրջապատող միջավայրում։ Յեթե գունավորումը լիներ հակառակը, այսինքն մեջքը լիներ բաց գույնի, իսկ փորի կողմը՝ մութ, այն ժամանակ խիստ յուրա միջոցին ըրջապատող Փոնի վրա կենդանին ավելի պարզ տէքի կընկներ։

Յեթե մենք դիտենք ամեն աեսակ գագանների խրբավիլակները, հատկապես այն գագանների, վորոնք ապրում են տափաստաններում և անապատներում, ուր թշնամիների հայցքներից հարկավոր ե ծածկվել, այն ժամանակ բոլոր կենդանիների նկատմամբ ել, առանց ամենափոքր բացառության, կարող ենք տեսնել գունավորման այդ նշանակալից կանոնը։ Վայրի կենդանիների մեջ հաճարյա բնավ չեն սպիտակ կեն-

դանիներ\*) և բոլորովին բացակայում են ձարսուկ, այսինքն՝ մութ բծերով սպիտակ կենդանիներ\*\*։

Լուսավորության այդպիսի պայմանների մեջ են գտնվում նաև ընտանի կենդանիները, բայց սրանց վերաբերմամբ Տայերի որենքի գունավորումն այնպիս բացահայտ չի յերեսում։ Նրանց մեջ մենք հաճախ ենք գըտնում մութ բծեր՝ մարմնի ներքեւի մասում և լուսավոր մեջք. Ելավելի հաճախ հանդիպում ենք բոլորովին սպիտակ գունավորման մութ բծերով սպիտակ Փոնի վրա—կամ հակառակը, — սպիտակ բծերով մութ Փոնի վրա։

Հարց ե առաջ գալիս, թե ինչո՞վ ե բացատրվում այս զանազանությունը։ Դժվար չե հասկանալ։ Ընտանի կենդանիները թշնամիներից պատսպարվելու կարիք չեն զգում, գունավորմամբ նրանցից քողարկվելու հարկ չկա. Նրանց բարեկեցության համար հոգ ե տանում մարդը և հոտի հավատարիմ պահակը՝ չունը։ Յեվ այսպես գաշտ քշվող կովերից կազմված վորեւ նախրում դուք կարող եք հաշվել բազմաթիվ սպիտակներ ու ձարտուկներ։ Ճարտուկ չեն, յեզներ և վոչխարներ զոյւթյուն ունենին գենես հին յեզիպատացիների ժամանակ, ինչպես այդ մասին վկայում են փարավոնների շիրիմների պատերին տակավին մնացած նախշած նկարները։

Նույնպես և վայրի կենդանիների մեջ մենք հաճարյա յերբեք չենք հանդիպում այնպիսիներին, վոր ունենան ամբողջ մարմնի՝ զուտ սև գունավորում։ Այսպիս գունավորված ե միայն խլուրդը, վորը գետնի տակ իրեն անցքերն ե վորում, բայց այդ հասկանալի յեւ. —

\*) Բացառություն կազմում են ձմեռն սպիտակ գունավորում սուացող մի քանի կենդանիները (горноста—կոռում և կաքավ) նույնպես և հուսախի սուցե անապատների բնակիչները (սպիտակ աղվես) և բարձրարերձ լիոնների հավիտնական ձյունների բնակիչները։

\*\*) Ազգ հարցին ծանոթանալու համար կարդացեք Վ. Շտամմ—«Կենդանիների պահպանման գունավորումը» (Վ. Շտամմ—«Запитные окраски у животных»)։

միենույնն և հողի տակ նրան վոչ վոք տեսնել չի կարող: Մինչդեռ վոչխարների, չների, խոզերի, հավերի սև տեսակներն ամենքին հայտնի յեն, և նրանց խիտ սև գույնը շատ կայուն է:

Յեթե գուտ սև, սպիտակ կամ ճարտուկ տեսակները յերեացին վայրի կենդանիների մեջ—քարայծների, պոնտական մկների, մկների, կամ մինչեւ տնդամ գիշատիչների մեջ, ապա ի՞նչ կպատահեր նրանց.—Նրանք հեռվից հենց կնկատվելին իրենց հետապնդող բոլոր բաղմաթիվ թշնամիներից, և շատ շուտով նրանց կողմից վոչնչացման կենթարկվելին, իսկ սև, սպիտակ կամ ճարտուկ գիշատիչները կմեռնելին սովից, քանի վոր նկատելի կլինելին իրենց վորսի կողմից, վորին նրանք ստիպված են աննկատելի, գաղտագողի մոտենալ:

Այսպիսով ընտանի կենդանիների գույնը, մինչեւնդամ առանց մարդու ջանքերի, սուր կերպով զանազանվում եւ իրենց վայրի ցեղակիցներից: Մարդը յերբեմն և դիտմամբ ընտրում է իրեն հաճելի այս կամ այն գույնը և առաջացնում կայուն տեսակ: Բոլորին հայտնի յեն անդորական սպիտակ կատուները, սև գանգրիկ չները (ուծել), սև «ակնոցներով» սև սպիտակախառն գույնի յարութափյան կովերը:

Ճիշտ այսպիսի կարեոր նշանակություն ունի և վոչխարների գույնը: Վոչխարների այն տեսակներից, վոր բաղմացնում են բրդի համար, աշխատում են ստանալ սովորաբար սպիտակ գույն: Կարակուլ վոչխարներից (կարակուլ), վորոնցից ստացվում եւ կարակուլի մորթի, վորը և գործադրվում եւ վզնոցների և գլխարկների համար, ընդհակառակն, աշխատում են ստանալ սև գույն:

Բացի դույնից՝ ընտանի կենդանիները տարբերվում են յերբեմն և բրդի այլ հատկություններով, այսպես ամենից առաջ մեծ յերկար մաղերով: Հայտնի յեռինակ, վոր բոլոր վայրի ձիերի ցեղակիցների բաշերը կարծ են, ցից-ցից, մինչդեռ ընտանի ձիերինը դեռ գաղ ժամանակներից սկսած դարձած են յերկար, կախ-

ված: Այսպիսի բաշավ ձիեր նկատված կան դեռ հին բարելոնի հուշարձանների վրա:

Մարդը հատուկ ուշագրություն դարձրեց վոչխարի և այծի բրդի վրա, և նրանց մեջ նկատում ենք բաղմաթիվ տեսակներ, վոր տարբերվում են միմյանցից բրդի ամենաբաղմազան հատկություններով: Դրանց բուրդը կամ լինում եւ գանգուր ու կարծ, ալիքավոր ու յերկար, կամ շատ նուրբ ու բարակ—պետքական բրդյա դորձվածքներ պատրաստելու համար:

Սյապես և ընտանի թուչունների մեջ ել առաջացան այնպիսի տեսակներ, վոր զանազանվում են իրարից փետուրների չափազանց զարգացմամբ, կամ թե չերբեմն ել փետուրները զատնում եյին մաղակերպ կամ կաղմում փունջ և ցցունք (խօնա և սուտան).— այդպիսի բան յերբեք չենք տեսնի դրանց վայրի ցեղակիցների մեջ:

Վայրի կենդանիների մեջ շատ հազվագյուտ գեղքերում ենք պատահում բավականաչափ ճարպակալվածների: Յեթե ճարպը հավաքվում է պաշարի համար, այն ժամանակ այն բաժանվում է այսպես թե այնպես հավասարաբար ամբողջ մարմնին, վորպեսզի կենդանու շարժումը չդժվարանա:

Ծնտանի կենդանիները մարդու հովանավորության ներքո գտնվելով՝ կարող են շատ չոգալ իրենց շարժողության մասին, և մենք հաճախ պատահում ենք նրանց մեջ այնպիսիներին, վորոնք ճարպի դրականապես այլանդակ կուտակում ունեն: Այսպիսիներից են որինակ Անգլիայում բազմացրած սպիտակ իրոկչիրյան խոզերը, վոր կերակրման ժամանակ ունենում են 400–500 կգ. կշիռ,— նրանց կարծ ու թույլ վոտները բոլորովին չեն համապատասխանում հոկայական ճարպային մարմնին:

Ճիշտ այդպես և Հնդկաստանի զերու կոչված յեղները հոկայական քանակությամբ ճարպ են հավաքում իրենց մեջքից կախված յերկու սապատների մեջ:

Հետաքրքրական ե, վոր հին մեկսիկացիները բաղմացնում եյին կերակրի համար գործածելի չների մի հատուկ տեսակ, վոր նույնական ունեցին մեջքի վրա ճար-

պի ստալատ. այս յերեսում և մեքսիկական շիրիմների պատերի վրա գտնված նկարներից :

Ընտանի կենդանիներն ունեն գտաճյալ մի առողջահամար կություն, վոր բնավ չի նկատվում վայրի տեսակների մեջ, բացառությամբ միայն փղերի, —այդ ընկած ականջներ ունենալն է։ Գտղանների ականջակոնքը ծառայում և ձայներ լսելու և բատ կարելուցն նբռանց ուղղությունը հեշտ վորոշելու համար։ Դրա համար ել զգայուն գիշատիչների կամ տափաստանների բնակիչների ականջակոնքերը վոչ միայն լավ զարդացած են, այլ նաև շատ ճկուն են, շարժուն, —կենդանին կարող ե ականջները դարձնել զանազան կողմեր։ Այդ այդպես ե, վորովհետեւ նրանք պետք ե ականջով վերահասու լինեն, թե վո՞ր կողմից ե սպառնում հարձակում նրանց վրա։ Կախ ընկած ականջակոնքը, ընդհակառակը, փակում ե ականջի մուտքը, շարժուն չե այն և միայն խանգարում ե լսելը, —ուստի և վայրի կենդանիների մեջ այդպիսի ականջակոնքի մենք բնավ յերեք չենք հանդիպում։ Մինչդեռ կախված և կիսակախ ականջներ պատահում են ըների, կովերի, վոչխարների, այծերի, խոզերի, կատուների, ճագարների և լամաների մի ուռողջ շարք տեսակների մեջ։ Այդ միանգամայն հասկանալի յե։ մարդն ինքն և լսում իր պահպանած կենդանիների փոխարեն և նրանք հարկադրված չեն հոգ աննելու ձայները լսելու համար։ Սակայն հովվի ոգնականը, հոտի շունը, միշտ ել ունենում ե սուր և լավ շարժուն ականջակոնքեր։

Ընտանեկան վիճակի մեջ յեղած կյանքը անդրադառնում և մինչև անդամ կենդանիների արտաքին կազմվածքի վրա։ Նրանց կմախքը, հատկապես գանդը, այնպիսի փոփոխությունների յե յենթարկվում, վոր յերեք չեն պատահում վայրի վիճակում։ Այսպես շատ ընտանի տեսակների մեջ նկատում ենք գանդի չտիտղանց կարճացման, —այնքան կարճ ե գտանում այն, վոր կարծես թե կտրված ե։ Հատկապես կարճանում են ծնողները։ Այդպիսի գանգը կոչվում է «մոպսանման», —քանի վոր այն ամենալավ կերպով արտահայտված ե

մոպսերի վրա։ Սակայն, բացի դրանից, մոպսանման գանդ ունեն և յորկչիրյան խոզերը, դուքսերյան և երինգյան յեղները և մինչև անդամ վոսկյա ձկների մի քանի տեսակները։

Յերեմին խիստ կերպով փոխվում ե նույնպես վերջափորությունների կմախքը, —տակասանների—կարճասրբունք չների—ծուռ թաթիկներն ամենքին հայտնի յեն։

Յեթե մարդը մտահոգված ե այն մասին, վորպեսզի ըստ հնարավորության շատ միս ստանա ընտանի կենդանիներից, —ինչպես որինակ՝ յեղջուրավոր անտունների մոացու տեսակների բազմացման ժամանակ, ապա պատշաճ կերպով կերպակրելով և ընտրանք կատարելով, նրան հաջողվում ե փոխել կենդանիների մարմնի մկանների զարդացումը և նրանցից առաջացնել շատ ավելի մեծ քանակություն, քան հարկավոր և տեղափոխության համար։ Սրա հետ մեկտեղ հաջողվում է նույնպես հասնել այն բանին, վոր միսն արագորեն աճի—այսպիսի «շուտափույթ հասնող» մսի անառունը համապատասխան կերպակրման պահին՝ ամենակարճ ժամանակամիջոցում հասնում է խոշոր կըսի, մի հանգամանք, վոր հարկավ շատ ոգտավետ և անտեսության համար։

Վերջապես ընտանի կյանքը բավականաչափ աղցում ե և կենդանիների բազմացման վրա։ Մարդու համար ոգտակար և առաջացնել այնպիսի կենդանիներ, վորոնք կտային համեմատաբար շատ ավելի սերունդներ, և նա միշտ ել հատկապես ընտրում եր այդպիսիները։ Յեկ ահա, ներկայումս վայրի խոզերը, որինակ, միանգամից բերում են 3–8 խոճկոր, մինչդեռ ընտանիները՝ 6–11. վայրի ճագարները տարեկան 4 անդամ ձագ են բերում, իսկ ընտանիները՝ 6–7։ Այսպես և ընտանի բազը տարեկան 10 անդամ ավելի ձու յե ածում, քան վայրին. հավն ել կարող ե տարեկան 250 ձու ածել, մի բան, վոր վոչ մի վայրի թռչուն չի անում։

Ընտանի կենդանիները բավականաչափ զանազան վում են և իրենց հոգեկան հատկություններով։ Մարդու հետ միասին ապրելու հանդամանքը՝ կենդանիներին

դարձնում ե անհոգ, քանի վոր մարդի անրնդհատ հոգում և նրանց մտոին. դրա չնորհիվ կենդանիները զրկում են վայրի կենդանիներին հատուկ՝ զբայնությունից, յերկշուռությունից, զգուշությունից, վոր այնքան փրկարար հատկություններ են ազատ կենցողավարության ժամանակ, յերբ թշնամիներն ամեն կողմից հետևում են նրանց:

Մարդս իր չորքոտանի ոգնականներին նույնականացնում ե հեզու խոնարհ, հասնելով այդ՝ և այլ հատկություններին ընտրանքի ճանապարհով։ Հաճախ մարդը զարգացնում ե նրանց հատուկ տաղանդները, — այսպես՝ ընտրանքի միջոցով չների վորսորդական զգայությունն ե բարձրացնում, ծիերի ճանապարհ դառնելու ընդունակությունը, արագավազության ծգառումը, խոզերի տգահությունը և կերակրի անխորականությունը։

Բոլոր այդ բազմաթիվ ու բազմազան փոփոխությունները, վոր կատարվել են ընտանի կենդանիների ներքին և արտաքին կազմվածքի, ապրուստի և հողեկան հատկությունների մեջ, առաջացել են մարդու պահանջների և ճաշակների համապատասխան։

Տեսակներն այնքան բազմազան են ու բազմաքանակ, վորքան վոր շատ են գործնական նկատառումները, վոր ունեցել ե ավյալ կենդանին մարդու կյանքում։

Սակայն, յերեմն, մարդը կենդանիների դանակուն տեսակների մշակման ժամանակ առաջնորդվում եր վոչ միայն ոգուտը նկատի ունենալով, այլ նաև լոկ ցանկությունը, քմահաճույքը, մողան։ Այսպես աղավնիների բազմաթիվ տեսակները, վորոնք զանազանվում են միմյանցից բազմապիսի առանձնահատկություններով, իրենց փետուրների գույնով, մարմնի ձևով, գլխի վրա յեղած կատարով և այլն—առաջացել են աղավնի պահողների իրար հետ ունեցած մրցման հետևանքով։ Դրանցից յուրաքանչյուրը կամմենում եր ստանալ այնպիսի աղավնիներ, վոր արտասովոր լինելին, վորպիսիները չունենային վոչ մի սիրող։

Ճիշտ այդպես առաջացել են՝ դեղձանիկների, ծովային խոզերի, վոսկե ձկնիկների և որիշ կենդանի-

ների բազմաթիվ տեսակները, վորոնք ծառայել են ավելի շուտ բավականության համար, քան ոգտակարության։

Այնուամենայնիվ մարդը, իր չորքոտանի և փետրավոր բարեկամների և ողնականների ընտրության ժամանակ, նախ և առաջ ոգտակարությունը նկատի ուներ։

Յեվ ինչքան վոր կենդանին ավելի ոգտակար եր, ինչքան վոր նրա մատուցած ծառայությունները, կամ թե չեն նրանից ստացած մթերքները բազմատեսակ եյին, այնքան ել մարդը հոգ եր տանում առաջացնելու բատհարավորության մեծ քանակությամբ զանազան տեսակներ, վորպեսզի իր բոլոր պահանջները բավարարի։ Յեվ իրոք, մենք տեսնում ենք, վոր ճիերի, չների և կովերի տեսակների թիվն աշապին ե, մինչդեռ եշերի, այծերի, ճաշաբների տեսակներն անհամեմատ բազմաթիվ են։

Ընտանի կենդանիներն այնպես սերտորեն կապված են մարդու և նրա կյանքի հետ, վոր ամբողջովին կախված են մարդու պահանջներից ու մինչև անգամ քմահաճույքից։ Նրանց վրա անդրադառնում ե մարդու բնավորությունն ու նրա ամբողջ կյանքը, — նրանք հանդիսանում են կարծես թե իրենց տիրոջ հայելին։

Ընտանի կենդանիների ծաղման և տարածման պատմությունը նմանապես սերտ կերպով կապված է մարդկության ընդհանուր պատմության հետ, և ժողովուրդների բախտը հաճախ անդրադառնում է մարդու չորքոտանի ողնականների և աշխատակիցների բախտի վրա։

Փորձենք հետագա մեր ակնարկների ընթացքում հետեւելու ալիք բախտին։

### ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՆԵՐ

Տայերի որենքի հիման վրա կենդանիների գունավորման որինակներ բերեք։

Ինչպիսի՞ կենդանիներ վայրի վիճակում ունեն զուտ սպիտակ գունավորում, և ինչու։

Բրդի մշակման ժամանակ բնչպիսի առանձնահատկություններ ե ընտրում մարզը, և ինչու։

## IV. ԶԻՈՒ ՆԱԽՆԻՆԵՐՆ ՈՒ ՑԵՂԱԿԻՑՆԵՐԸ

Մենք ձիուն այնպես ենք սովորել, վոր մեզ համար գժվար և մինչև անգամ պատկերացնել այն ժամանակը, յերբ մարդն անծանոթ եր նրան, չգիտեր նրա գոյության մասին և կառավարվում եր առանց այդ արժեքավոր ողնականի: Յեվ իրոք ձին ուղեկցում է մարդուն անհիշելի ժամանակներից սկսած, —կարելի յե առել նրա պատմության ամբողջ ընթացքում:

Այնուամենայնիվ յեզիպտական պատմության հին ու միջին շրջանների վերաբերյալ Յեզիպտոսի հուշարձանների վրա ձիւ պատկեր չկա, և կարելի յե յենթագրել, վոր այն ժամանակ Յեզիպտոսում ձի չկար:

Այսպես ձին տարածված եր յերկրագնդի վո՛չ բոլոր տեղերում: Յերբ կոլումբոսը և նրան հաջորդող սպանացի և փորթուգալացի ծովագնացներն առաջին անգամ հարավային և հյուսիսային ափերն իջան, նրանք այնտեղ ձիեր չգտան, և սպանացի նվաճողների հեծելազորը խուճապային սարսափ եր ազդում տեղացիների վրա, վորոնք ձիերի նման զարմանալի բաներ յերեք չեյին տեսած: Ճապոնիայում ձին հայտնվեց նույնպես պատմական ժամանակներում, և մինչև այսուր ել այնտեղ ձիերի թիվը քիչ ե, ճապոնական յերկրագործները ձիու ծառայություններից չեն ոգտվում, հոգի ամբողջ մշակությունը նրանք ձեռքով են անում: Այս հանգամանքի պատճառները պետք է վորոնել յերկրի առանձնահատկությունների և անտեսության մեջ: Ճապոնիան-լեռնոտ յերկիր ե, և հողագործության համար այնտեղ քիչ տարածություն կա, վորովհետեւ աղղաբնակչությունը շատ խիտ և բնակված: Արտատեղիներ, ուր ձիերը կարողանային արածել, բոլորովին չկան: Միենույն ժամանակ ճապոնիայի տաք կլիման

նպաստում է այն բանին, վոր միենույն արտից կարելի յե լինում տարեկան մի քանի բերան հունձ ստանալ, և բացի դրանցից հնարավորություն է լինում բրինձ և յերկրագործին ոգտավետ այլ բույսեր մշակել: Այս բուրը միասին վերցրած հնարավորություն է ընձեռում ճապոնացուն կառավարվելու առանց ձիու, —նա մշակում է իր շատ փոքրիկ արտը բահով և վո՛չ թե զութանով: Զիեր չկային Պոլինեզիայի կղզիներում և Ավստրալիայում:

Զնայելով այն հանգամանքին, վոր ձիերը Ամերիկային յեվրոպացիք, բայց իրոք հատկապես ամերիկական մայր ցամաքն և հանգիսանում բոլոր միասմբականիների: Զյուսիսային Ամերիկայի մայր ցամաքի վրա ապրել են մարդկացին դարաշրջանից առաջ բոլոր այն կենգանիները, վորոնք ձիու խսկական նախահայրերն են յեղել:

Ինչպես ցույց ավելի պեղումների հետեւնքով բարձրաթիվ վոսկորների հայտաբերումը, Հյուսիսային Ամերիկայի մայր ցամաքի վրա ապրել են մարդկացին դարաշրջանից առաջ բոլոր այն կենգանիները, վորոնք ձիու խսկական նախահայրերն են յեղել:

Նրանց բոլորին մենք չենք թվի, բայց կնշենք մի հետաքրքրական հանգամանք: —

Զիերի ամենաառաջին նախահայրերը փոքր հասակ ունելին, շան մեծությամբ, և ուրեմն վերջավորությունների վրա հնդական մատներ՝ ոժաված շատ փոքրիկ սմբակներով:

Հետագա զարգացման բնթացքում, ավելի ուշ ժամանակներում, նրանցից առաջացան այնպիսի կենգանիներ, վոր թե առաջին և թե յետին վոտների վրա ունելին միենույն մեծություն՝ բնդամենը յերեքական մատներ: —յերկու ծայրերի մատներն անհետացան: Զիերի ավելի հետագա ժամանակների նախահայրերի մաս՝ այդ յերեք մատներից՝ կողքերին գտնված յերկուսն սկսել են կարծանալ, այնպես վոր գետնին չեն հասել, և կենդանիները քայլել են, զետնին հենվելով միայն միջին մատով, վորը և հետզհետեւ զգալիորեն մեծացել է: Ապա, ավելի ուշ, կողքերի այդ մատները բոլորովին փոքրացան և դարձան համարյա աննշմարելի ավելցուկներ, կորցնելով և իրենց սմբակները:

Վերջապես մեր յերկրաբանական դարսչը ջանի մուտիկ ժամանակներում տուաջացան արդեն խսկական ձիերը, վոր ունեցին միակ զորեղ զարգացած և մեծ սմբակով ոժտված միջին մատ, խսկ կողքերի մասները համարյա թե անհետացած եյին, նշմարելի եյին վորպես յերկու փոքրիկ վոսկորիկներ:

Այսպէս զանագան հնությունների շերտերում զբանված առանձին հանածոնների մնացորդների հիման վրա՝ մենք կարող ենք Հյուսիսային Ամերիկայում տեսնել, թե ինչպես և առաջանում մեր ձիու վոտքի զարգացումը։ Այդ զարգացումն ընթացել է աստիճանաբար, և կերպափոխությունը կատարվել է սակավ առ սակավ, մինչև վոր, վերջապես, հինգ մատնանի կենդանիներից առաջանում են մի մատնանի կենդանիները։

Ներկայումս մենք Ասիայում և Աֆրիկայում զբանում ենք մի շարք ձիանմաններ, վոր Հանգիստանում են ընտանի ձիերի մոռիկ աղջակիցներ,—այդպիսիններն են՝ վայրի եշերը, կուլանները\* և վաղերաձիերը։ Սակայն նրանք բոլորն ել գորեղ կերպով տարբերվում են իրենց կազմվածքով մեր ընտանի ձիուց և չեն կարող համարվել վերջինիս խօսկան նախահայրերը։


Ամենայն հավանականությամբ ընտանի ձիու իսկական նախահայրը յեղել է վայրի ձին, վորն ապրել է Արևմայան Յեվրոպայում այն ժամանակներում, յերբ մարդն ոգտվում եր զեռևս քարե գործիքներով։ Այս ժամանակ Ֆրանսիայում, Սոն դետի հովտում ձգվում էին ընդարձակ տափաստաններ և նրանց վրա արածում ելին վայրի ձիերի հսկայական յերամակներ, վորոնց ըստ յերեսութին վորում ելին այդ տեղերի նախարարեակիչները։

Սոլյուտրե կոչված այժմյան ափանի մոտերը գետնի տակ գտնված են ամբողջ շերտերով՝ ձիերի վոսկորների մեծաքանակ մնացորդներ։ Այդ շերտերը բռնում են մոտ 4000 քառակուսի մետր տարածություն, իսկ հաս-

Ծանսթ. —Կուլաննը-Asinus hemionus—վայրի լեզներն են,  
վոր գտնվում են Թուրքմենստանի տափաստաններում, Արաբան  
լճի կողմերը։ Թարգմ.։

առությունը տեղաբակ հասնում է 2 մետրի: Մոտավոր հաշվով կարելի յէ կարծել, վոր այնտեղ գտնվում են վոչ պակաս, քան 100,000 ձիու մնացորդներ: Այնտեղ գտնված չատ վոսկորներ այրված են և քարով ջարդված՝ վոսկորի ուղեղ ձեռք բերելու համար: Ձիու վոչ մի ամբողջական կմախք չի գտնված: Ուստի կարելի յէ կարծել, վոր այստեղ ձիերի գիտելիք կուտակումը պատահականորեն, ջրի հոսանքով չի կատարված, դրանք այս կողմերի նախարարակիչների խնջույքների մնացորդներն են,—չատ կարելի յէ մի ամբողջ շարք սերունդների խնջույքների:

Հենց այդ տեղերում գտնված են վայրի ձիռ զանազան պատկերներ, վոր նախամարդու ձեռքով քանդակված և վոսկըից (նկար 1), և նկարված քարանձավ-ների պատերին։ Երանք բոլորը ներկայացնում են վեչ մեծ, հասողիկ ու կարճիկ, ամբակաղմ ձիեր, վոր ու նեն խոշոր գլուխ և ուղղաձիգ բաշ, ինչպես վագերա-ձիռնք։



ՆԿԱՐ 1.


Ֆրանսիայի Սույ գետի ա-  
փերին ապրած նախամար-  
դու ձեռքով քանդակված  
պարփակութեաւուր:

Հին հանածո վայրի ձիերի այս պատկերները զորեղ ու հաստատուն կերպով հիշեցնում են այն միակ վայրի ձին, վորք ներկայումս կա Միջին Ասիայի տափաստաններում։ Այդ ձին առաջին անգամ դատավ Ասիայում ճանապարհորդություն կատարած մեր նշանավոր ճանապարհորդ՝ Ն. Մ. Պրժեվալսկին՝ Զունգարյան Գուգարակություն։ Նա հաջողեց սպանել ու բերել բի անապատներում։ Նա հաջողեց սպանել ու բերել այդպիսի ձիու մորթին ու գանգը։ Դրանց հիման վրա գիտնականները նկարագրել են մինչև այդ միանգամայն անհայտ մնացած ձիու այդ տեսակը և անվանել են այն՝ «Պրժեվալսկու ձի» (նկար 2)։

կենտրոնական Ասիայի հետագա այլ ճանապար-  
հարդներ, —Գրում-Գրժիմայլո, Ռոբորովսկի, Կլեմենց, —

րերել են դարձյալ մի քանի մաշկեր, և ի վերջո կարս-  
դացել են ձեռք բերել մի քանի ջահել վայրի վողջ ձիեր։  
Այդ ձիերից մի մասը հասցրել են Գերմանիա, մի մասը  
մեղ մոտ, և ապրում ելին Մոսկովյան կենդանարանու-  
կան այգում և մեր նշանավոր Հարավ-Ռուսական կեն-  
դանարանական պարկում—Սաքանիա-Նովայում։

Զափահաս վայրի ձիերն այնպես արագավազ են,  
վոր նրանց բոնելն անհնարին ե։ Դրա համար ել մոն-  
ղոները, վորպեսզի կարողանան ձեռք բերել այդ ձիերը,  
սպասում են հարմար ժամանակի, յերբ նրանց յեր-  
մակներում հայտնվում են շատ ջահել մտրուկներ։ Այն  
ժամանակ նրանք իրենց նժույդներով հարձակվում են  
յերածակների վրա և այնքան հալածում նրանց, վոր  
վերջ ի վերջո յետ ընկած, հոգնած ջահել կենդանինե-  
րին բոնում են։ Վայրի վորձ մտրուկները բաց են թող-  
նվում մոնղոլական մատակ ձիերի մոտ, վորով հնարա-  
վորություն և ստացվում նրանց կերակրելու, և այսպի-  
ւում է այսպիսի պատճեն առաջնային արժեք։



ՀԿԱՐ 2

Վայրի «Պերսերաւ-  
ոկ» ձի, վոր բը-  
նակվում և Միջին  
Ասիայի անապատ-  
ներում։

սով հետզետե սովորում են մարդուն և բավականաչափ  
բնականում։ Այսպիսի դրությամբ նրանց արգեն կա-  
րելի յե Յելբուպա ուղարկել, թեական նրանցից մի մո-  
ւոր սովորաբար ճանապարհին կոտորվում է։

Այդ ձիերը կարծահասակ են, հաստլի, մեծ գը-  
խով և ուղահայաց բաշով։ Նրանց գույնը—մոխրա-

վագուկին և, բաց գեղին, նման անապատների ա-  
վազի գույնին։

Նրանց մեջքի յերկարությամբ ձգվում է մթին մի  
պիծ, ուսերին ունենում են մութ գծաշերտեր, վուքերի  
ծայրերը, պոչն ու բաշը—մութ-գորշագույն են, հա-  
մարյա սկ։ Վայրի «Պրժեվալսկու ձին» սովորական  
ձիուց տարբերվում են այս և առաջ իր պոչով, վոր նը-  
մանվում ե իշխ պոչին,—պոչի յերկար մազերն սկսվում  
են վոչ թե անմիջապես արմատից, այլ նրանից քիչ հե-  
ճու, այնպես վոր պոչի վերին մասը ծածկված ե կարձ  
բրդով։

Այսպես թե այնպես, վայրենի ձին ընտանի ձիուն  
ավելի մոտ ե, քան եշերին, կիսաեշերին և վագերածիե-  
րին.—յերիվարների այս ներկայացուցիչներն ունեն  
մազու, այսպես կոչված «կոճիկներ» «(կաշտանուր)»  
միմիայն առաջին վոտների վրա, մինչդեռ ընտանի և  
վայրենի ձիերն ունեն և առաջին և յետին վոտների վրա  
(ի միջի այլոց զըրզըզների ձիերը վոտների վրա յեր-  
բեմն «կոճիկներ»—ը բացակայում են)։ Բացի դրանից,  
ընտանի և վայրի ձիերն իրենց գանդի և կմախքի կա-  
ռուցվածքով ել շատ մոտիկ են իրար։ «Պրժեվալսկու  
ձին» անկասկած մոտիկ ե և Սոն գետի հովտի հանածո  
վայրի ձիուն, և կարելի յե կարծել, վոր նրանք մոտիկ  
աղդակիցներ են։ Մարդու զենքերի կատարելագործ-  
մամբ Յելբուպա վայրի ձիերը յենթարկվել են բր-  
նաջնջման գեռեա նախապատմական ժամանակներում,  
բայց Ասիայի կենտրոնական անապատներում նրանք  
պահպանվել են։

Վայրի ձիու մոտիկությունն ընտանի ձիուն յերե-  
վում ե և այն բանից, վոր նրանց զուգախառնումը հեշ-  
տությամբ ե կատարվում։ Այդպիսի փորձել կատարվել  
են Ասքանիա-Նովայում և կարողացել են ստանալ կի-  
սաղնիվ ձիեր։

Սակայն մեր ընտանի ձիերի ցեղերի միակ նախա-  
հայրը՝ ժամանակակից վայրի ձին—«Պրժեվալսկու  
ձին» չե։ Նրանից, ըստ յերեսոյթին, առաջացել են  
միայն՝ Միջին Ասիայի ձիերի ցեղերը, իսկ նրան ցեղա-

կից ձիերից, վորոնց հանածոներն են գտնված Միջին Յեղոպայում, առաջացել են այսպես կոչված ծանրամարմին, սառնարյուն յեղոպական տեսակները:

Չիու մեկ ուրիշ նախահայրը պետք է համարել այն վայրի ձին, վորն ապրել է մեր Հարավ-Ռուսական տափաստաններում և բոլորովին բնաջնջվել է մոտ ժամանակներում. Վերջին վայրենի ձին՝ պանդաված է յեղել 1880 թ.: Այդ վայրի ձիերը կոչվում եյին «տարպան»-ներ, վոր ունեյին վոչ բարձր հասակ, մեծ զլուխ, յերկար բաշ, շագանակամ-մոխրավուն զույնի մորթի և մեջքի վրա մթավուն գիծ: Տարպանի կմախքն ու գանգը զանազանվում եյին մի քանի առանձնահատկություններով, այնպես վոր նրան չի կարելի շփոթել Միջին Ասիայի վայրի ձիու հետ: Տարպանները բնակվել են մեր Հարավակողմի տափաստաններում զեսես նախապատմական ժամանակներում, և նրանցից առաջացել այն ձիերը, վորոնք ողտագործվել են սկզբութայիների կողմից, իսկ հետագայում նրանցից առաջացել են և մեր սովորական գեղջկական ցեղերը: Յենթագում են, վոր տարպանները յեղել են նույնպես՝ բարելոնական և յեղիպտական ձիերի նախահայրերը: Տարպանը հանդիսանում է նմանապես և արարական ձիու նախահայրը, այն արարական ձիու, վորի մարմնի բարեկաղմությունն որինակելի յե համարվում: Միջագեաքում, Պարսկաստանում, Արարիայում, Փոքր Ասիայում չկային վայրի ձիեր, վորոնցից կարողանային առաջանալ բնտանիները: Աֆրիկայում ել չկային վայրի ձիեր:

Չիանմանների բնտանիքի բոլոր ներկայացուցիչները պետք են, սակայն, բնույնվեն իրեն բավականին մոռիկ ազգակիցներ՝ հենց նրա համար, վոր նրանց միջև հեշտությամբ են առաջանում խառնուրդներ: Այդ խառնուրդները, սակայն, միշտ բեղմնավոր չեն լինում: Բայց այնուամենայիլ խառնուրդ հաճախակի սառց—վում են և այդ խառնուրդներից սառցված ձիերն ունեն վոչ պակաս կարեռը գործադրություն:

Այս խառնուրդների մեջ առանձնապես կարեռ նրանակություն և սառնում ջորին: Ջորին՝ արու իշի և

մատակ ձիու խառնուրդն է: Ջորիները զեռևս հնումը հայտնի եյին իրենց տոկոնությամբ, ուժով և աշխատունակությամբ: Այդ հատկությունների համար՝ նըրանց հաճախ ձիերից բարձր են զատում և բազմացնում են: Ներկայումս այդ գործով զբաղվում են գլխավորապես իտալիայում, Սպանիայում և Ֆրանսիայում:

Վործ ձիու և մատակ իշի զուգախառնումից ստացվում է մեկ ուրիշ խառնուրդ՝ ջորի-մուլուսով (mulus-lovok), վոր աչքի յե լնկնում իր վոքքահասակությամբ և վոչ այնպես ուժով: Ջորիները, ինչպես և ջորի-մուլուսունները՝ հավասարապես անպոտղ են և սերունդ չեն տելիս՝ վոչ միմյանց հետ ունեցած զուգախառնումից և վոչ ել ձիու:

Չիու ել ազելի հեռավոր ազգակիցներ, քան եշերը, կարելի յե համարել աֆրիկական անապատների բնակիչներին՝ վագերաձիերին (գերբերին): Նրանք մի քանի կիչներին՝ վագերաձիերին: Նրանք մի քանի կիչներին լինում, վորոնք զանազանվում են իրենց չափով ու գույնով: Զնայելով այն բանին, վոր ձեռվ վագերաձին ավելի շատ մոտիկ և ձիուն, քան իշին, — այնուամենայնիվ նրա հետ խառնուրդ ստանալի ավելի գիշով է: Համենայն զեպս այս հաջողվել է և կարողացել են ստանալ վագերաձիանմաններ (զեբրուն), վորոնք իրենց բնույթով վագերաձիու և ձիու միջին տեղն են բնում: Հատկապես աչքի ընկնող և վագերաձիանմանների գունավորումը: Վագերաձիուն հատուկ զծաշերերի զասավորման բնդհանուրը բնույթին ու պլանը պահպանվում է, բայց այդ շերտերը վագերաձիանման մարմնի վրա կարծես թե փոխվում են և խառնվում: Այնոլիսի տպավորություն և սառցվում, վոր կարծես թե վագերաձիու մարմնի վրա վերելից ձիու կաշի յե քաշած, վորի միջով յերեւում են վագերաձիերի գծաշերերը:

Վագերաձիանմաններն ամեն տեսակետից ավելի հարմար կենդանիներ են, քան իրենք վագերաձիերը: Նրանք ավելի հնագանդ են, հեշտությամբ են վարժվում՝ թե լծվելու և թե հեծնելու համար: Նրանք հեշտությամբ ել դիմադրում են տեղական հիվանդու-

թյուռներին, մանավանդ ցեղեկ կոչված ճանձերի կծոցներին։ Այդ ճանձերը պատվաստում են կենդանիներին շատ վտանգավոր, չափազանց փոքր (միկրոսկոպիկ) պարագիտով, վոր կոչվում է տրիպանոզոմա։ Այդ պարագիտներն արյան մեջ զարգանում և առաջ են բերում ճանր հիվանդություն, վորը տանում է դեպի մահ։

Չիերը բոլորովին չեն դիմանում ցեղեկ ճանձերի կծոցներին, իսկ վագերածիանմանները նրանցից բնույթ չեն ել հիվանդանում։

Չիու մերձավոր ցեղակիցներին և նրա նախառայրերին ծանոթանալը դեռևս քիչ է սղնաւմ մեղ լուծելու այն գաղտնիքները, —թե ի՞նչպես և յե՞րբ մարդն տռաջին անդամ սովորեցրեց ձիուն։ Նախապատմական մարդու մի քանի նկարների մեջ կարծես թե կան ձիերի վրա քաշած սանձի և թամբի նշաններ, վոր սակայն գիտնականների մեծ մասի կողմից չեն բնդունվում վորպես սանձ ու թամբ։ Մենք մինչև անդամ չգիտենք, թե առաջին անդամ ձիուն վորտեղ են ձեռնասուն զարձրել։ Ամենայն հավանականությամբ այդ բանը տեղի յեւ ունեցել թե Յեվրոպայում և թե Ասիայում գրեթե միաժամանակ։

Արգեն ընտելացած ձիու պատկերացման առաջին հուշարձանը՝ ինչպես Յեղիսատոսում, այնպես և Ասիայում՝ վերաբերում են մեզնից 3.600 տարի առաջ յեղած ժամանակներին։ Այդ ժամանակներում արգեն ձին գործադրվում եր պատկերազմի համար։ Նրան լծում են ուղմական յերկանիվ կառքերին։ Ասորեստոնը դեռևս նախապատմական ժամանակներում Պարսկաստանի միջոցով ձիեր եր ստանում Հարավային Ռուսաստանի տափաստանի տափաստաններից։ Բայց յերեւոյթին Ասորեստոնը հանդիսանում եր այն կենտրոններից մեկը, ուր սովորեցնում եյին ձիերին, և, շատ կարելի յեւ, հենց այդտեղից ել նրանք տարածվում եյին Միջերկրականի ծովափնյա բոլոր յերկրները, և Հին Հունաստանի ժամանակներում ձին արգեն ամենուրեք սովորական ընտանի կենդանի յեր զարձել։ Հենց Հին Հունաստանի մեջ ձիությունն առանձնապես բարձր զարգացման չհա-

ամվ, վորովհետեւ այդ բանի համար Աստաֆիկան շատ բիշ տեղ ուներ։ Սակայն հույները ձիեր ստանում եյին Թրակիայից, Եպիրոսից և Թեսալիայից և մինչև անդում Սկյութարիայի տափաստաններից, այսինքն մեր այժմյան հարավային մարզերից։ Աթենքում արդեն գոյություն ուներ ձիու սպորտը, ձիարշավը տեղի յեր ունենում յերկանիվ կառքերով։ այս արշավները հանդիսանում եյին վոլմպիական խաղերի մեջ եյական մըրցություններից մեկը։ Այդ ժամանակներին են վերաբերում նաև՝ ձիերը պահելու և ձիով ճանապարհ գնալու ինդիբներին նվիրված առաջին գրվածքները։

Հոոմեացիներն ել ձիարշավների, սպորտի մեծ սիրահարներ եյին, նրանք ել յերկանիվյան և իսկական ձիարշավներ եյին սարքում։ Այդ արշավները տեղի եյին ունենում կրկեսներում։ Հաճախ այդ խաղերին մասնակցում եյին նաև Հոոմի կայսրները։ Սակայն հոոմեացիք չեյին կարող պարծենալ իրենց հեծերազորով։ Նրանց հարեւան շատ բարբարոս ցեղեր շատ ավելի լավ եյին կառավարում ձիերն ու ձիավորներին, քան իրենք։

Գերման և գալլ ցեղերը ծանոթ եյին ձիուն դեռ անհիշատակ ժամանակներից և պարապում եյին ձիարշածությամբ։ Նրանց ձիերը տգեղ տեսք ունեյին և առանձին արագաշարժությամբ ել աչքի չեյին բնինում։ Նրանք ունեյին կարծ ու լայն և համեմատաբար մեծ դրւխ, անձոռնի վոտքեր, յերկար պոչ և գանդուր բաշ։ Հիմք կա կարծելու, վոր նրանք ասածացեցին են այն վայրենի ձիերից, վորոնք նախապատմական ժամանակներում ապրելիս են յեղել Արեմայան Յեվրոպայում և Միջին Ասիայի ձիերի նախահայրերն եյին։ Աստ և պատմական ժամանակներում Գերմանիայում տեղ-տեղ ապրել են տակավին վայրի ձիեր, —այսպես, մինչև անդամ 19-րդ դարում նրանց յերամակները տեսել են Պրուսիայում—Դուխոբուրդյան անտառում։

Նորագույն պատմական ժամանակներում ձին մեծապես տարածվեց Յեվրոպայում, մինչև անդամ նրա հյուսիսային յերկրներում, ուր առաջ գոյություն չուներ։ Յեվրոպայի սահմաններում բոլոր ձիերի թիվը

հաշվում են մոտավորապես 40 միլիոն դրամ, վորի կեսը զտնվում է Խորհրդային Միության յեվրոպական մասում:

Քանի յեվրոպացիները գտղթում են նվաճում եյխն աշխարհի այլ մասերը, այնքան ել նրանց հետ մեկտեղ տարածվում եր և ձին: Այսպես նա կըկին յերեաց Հյուսիսային ու Հարավային Ամերիկայի անտառաներում, ուր յերեմն արածում եյխն նրա հեռավոր նախահայրաբերը, —նա այնուեղ իր գոյության համար գտավ հրաշալի պայմաններ. ձին ընկավ իրեն համար բոլորովին մի նոր աշխարհ—Ավստրիայիա, ուր առհասարակ յերրնեք չի յեղել ամբակավոր կենդանի: Ամբողջ յերկրագնդի վրա ձիերի թիվը հաշվում են մոտավորապես 100 միլիոն գլուխ:

Ձին շատ արժեքավոր ե մարդու համար. նրան շատ ծառայություններ ե մատուցանում՝ թե խաղաղ աշխատանքի, թե պատերազմի ժամանակ և թե առևտրի և արդյունաբերության գործում, —այնպես վոր ձիերի վորակով ու քանակով կարելի յե վորոշել վորեն յերկրի բարեկեցությունը:

Ազգաբնակչության թվի համաձայն՝ ինչքան շատ ինի ձիերի քանակը, այնքան ել անկանոն բարձր կրկինի հողագործությունը, յեսանդով առաջ կցնա արդյունաբերությունը, —վորը շարունակ նյութեր ստանալու կարիք ունի, —և կենդանանա առևտուը:

Ամենայն վասահաւթյամբ կարելի յե տաել, վոր ձին հանդիսանում ե մարդու ամենալավ ողնուկան ու աշխատակիցը:


## V. ԶԻԵՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Այնպիսի բնդարձակ ե իր բնությամբ այնքան բազմազան մի յերկրում՝ ինչպիսին Խորհրդային Միությունն ե, բնական ե, վոր կմշակեցին ձիերի բազմատեսակ ցեղեր, վոր զանազանվեցին և իրենց արտաքին, և իրենց ներքին հատկություններով և իրենց գործուղությամբ:

ՈՍՖԻՑ Հանրապետության հյուսիսում կան մալորուան ձիերի մի շարք ցեղեր, վոր հաստիկ-կարձ և բավականին ուժեղ են: Նրանց ցեղին պատկանում են շվեդական կամ Փիննական ձիերը, վորոնք աչքի յեն ընկնաւմ իրենց զիմացկունությամբ, սակավապետությամբ և արտգընթացությամբ:

Արեւելյան նահանգներում մենք հանդիպում ենք Որվինի, Վյատկայի և Մեզնի տեսակներին: Այդ ձիերը համարվում են գնահատելի բանվորական ձիեր, վորոնք շատ զիմացկուն են և ցրտից ել չվախեցող:

Մեր հարավային բնդարձակ գաչառվայրերում կան առփառանի տեսակներ, վոր նույնպես կարճահասակ և ամրակազմ ձիեր են, նրանց մեջ առաջին տեղը բըռնում ե զըրզըզյան ցեղը, վոր շատ կարեւոր և հեծելուրի համար և ոժաված և արագավագությամբ: Պակաս շնահատելի յեն կալմիկյան և բաշկիրյան ձիերը, —նրանք տվելի շուտ պետքական են լծելու համար: Դունում առաջացել և նույնպես ձիու մի հատուկ ցեղը—Դոնի ձին, վորը բավականաշափ խոշոր և, ունի բարակ ու յերկար պարանոց, ուղիղ ու զորեղ մեջք և յերկար ու բարակ վոտքեր: Եա աչքի յե ընկնաւմ իր մեծ առկունությամբ և արտգավագությամբ: Մի շարք լեռնային տեսակներ կան:



ՆԿԱՐ 3. ՈՐԼՈՎԻ ԱՐԱԳԾԵՑԱՑ ՁԻ (ՐՅԵԱԿ)


Կովկասում հանդիպում ենք ամենաբարձր տեսակի արշավաճիերի, վորոնք ազգակից են արարական ձիերին: Նրանց կարգին են պատկանում նախ և սուած Դարադի և Կարարդայի տեսակները:

Ուստահան ամենանշանագոր տեսակներն են՝ Որլովի արագընթացները (րյեակ) և Քիտյուգները: Այդ տեսակներից առաջինը բազմացնում են՝ զլիավարապես րիս բնթացքի համար. նա սուածացել է 18-րդ դարում արարական, գանինական և հողանդական ցեղերի խառնուրդից, այն ժամանակ, յերբ Որլով-Զեսմինսկի իշխանը հիմնեց Վարոնեժի նահանգում Խրենովի նշանավոր ձիու զործարանը և ձեռք բերեց նրա համար արարական մոխրագույն արու մտրուկ: Այդ արու մտրուկի և ուրիշ ցեղերի զուգավասունումից սուած յեկան Որլովի արագընթացները—ուժեղ կարգացած վոսներով ու կըծքով խոշոր ձիերը:

Նրանք աչքի յեն ընկնում իրենց զեղեցկությամբ, ուժով և արագավագությամբ: Նրանք զլիավարապես մոխրագույն են կամ ու վայրուն խոսով:

Յերկըրորդ միջին-սուսական տեսակը՝ բիտյուգներ, վորն աչքի յե ընկնում իր հսկայական ուժով և բեռներ կը կը լու առանձնահատկությամբ (նկ. 4): Նրանք բազմացրել են Վարոնեժի նահանգում, ուր և Պետրոս Մեծն ուղարկել ե մի քանի հոլանդական արու մտրուկներ, սրանց ու տեղական ձիերի և հետո ավելի ուշ Ռուսի արագընթացների—բիտյուգների—զուգավախառնումից առաջացել ե այլ արժեքավոր ցեղը: Այդ ցեղի ձիերը շատ խոշոր են, մազում՝ վոչ մեծ զլիավագություններով: Ուժեղ և սակավապես բանվորական ձիերի բազմացումը պես լինում ե՝ աշխատ, ճարտուկ ու մոխրագույն:

Տարաբախասարար մեր մեջ համեմատարար քիչ ուշագրություն են դարձնում բանվորական ձիու լով տեսակ սատնալու վրա: Մեր գեղջկական ձիերը մեծ մասմբ չեն կարող պարձենալ բարձր հատկություններով: Ուժեղ և սակավապես բանվորական ձիերի բազմացումը պետք է լինի մեր ապագա խնդիրները:



ՆԿԱՐ 4. ԲԻՏՅՈՒԳ

## VI. ԿՈՎԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մարդն ամենայն հավանականությամբ շատ ավելի վաղ և ձեռք բերել խոչը յեղջյուրավոր անսպունը, քան ձին: Համենայն գեսու արդեն Ասորեստանի և Հրնդկաստանի հնագույն հուշարձանների վրա, նմանապես մեր թվականությունից 5-6000 տարի առաջ յեղած հին յեղիպահական հուշարձանների վրա մենք գտնում ենք արդեն բնտանի կենդանիների շարքում նույն յեղների պատկերներ:


Յեղջյուրավոր անսպունների մասին յեղած այս հնագույն տեղեկությունները և նրանց լայնարձակ տուրածվելլ բոլոր այն յերկրներում, ուր մարդկի են տոլրում, —ստեղծում են դժվար կացություն վորոշելու, թէ ընտանի յեղն ու կովը վո՛րպիսի վայրենի կենդանիներից են ծագել: Համենայն գեսու նրանց ընտերցումը զուգագիպում և քաղաքակրթության սկզբնավորությանը, քանի վոր հատկապես յեղջյուրավոր անսպունն և հնարավորություն տվել յերկրագործության անցնել, —սկզբներում միմիայն նա յեր ծառայում դաշտերի մշակության համար —և վո՛չ թէ ձին:

Խոչը յեղջյուրավոր անսպունների նախահայրերին պետք է վորոնել Յելրոպայում և Աստրայում, — Սֆրեկայում բնավ չեն յերեացել վայրի յեղներ, վորոնցից կարելի լիներ ստանալ ընտանիներ:

Ներկայումս Յելրոպայի սահմաններում պահպանվել է միմիայն մեկ վայրի յեղ, բայց այն ևս համարյա ընաշնչված է, —այդ մեր գուրբն և —վայրի ցուլը: Սա ապրում եր գեռես համաշխարհային պատերազմից առաջ բավականին մեծ թվով Բելովեժյան խիտ անսպուռմ, իսկ մի քիչ տարբեր ձեի «կովկասյան գուրբ» կոչված ցուլը՝ ապրում եր Հյուսիային Կովկասի տն-

տառներում: Պատերազմի ժամանակ Բելովեժյան անտառը ուղղմական գործողությունների շրջանակի մեջ եր ընկել, և վայրի ցուլերը —զուրբերը վերջնականապես ջնջվեցին: Կովկասում գեռես այդ ցուլերը գոյություն ունեն, սակայն շատ փոքր թվով, և, ամենայն համար հականությամբ նույնպես շուտով կանհետանան, չնայելով ձեռք առնված պահպանման միջոցներին:

Համենայն գեղս վայրի ցուլն ընտանի յեղջյուրավոր անսպունների նախահայրը համարվել չի կարող, նա իր կազմվածքով ավելի մոտ և ամերիկական վայրի ցուլին —քիզոնին: Բայց մեկ ուրիշ վայրի յեղ, վոր սրանից մոտավորապես 300 տարի առաջ յեղել և Յելրոպայում, անկասկած աղքակից և մեր ընտանի յեղներին, —դա այսպես կոչված տուրն է, վոր մեծ բաղմությամբ ապրում եր այն ժամանակներում, յերբ Յելրոպան բնակված եր սկզբնական վորսորդներով: Նախապատմական մարզու ձեռքով՝ Սպանիայի խորը քարանձավներում քաշած նկարների շարքում պահպանվել են տուրերի պատկերները: Խորին պատմական հնության հուշարձաններից ևս տուրերը հայտնի յեն, նրանց



Նկար 5.

Վայրի յեղ—տուր. Հերմերշտեյնի նկարը 1517 թվականին:

15-րդ դարում նրանք դոյտեթյուն ունեին Գերմանիա-  
յի Նեյբուրգյան անտառում։ Նմանապես նրանք զըտ-  
նվում եյին և Հին Ռուսիայի անտառներում և ավա-  
տական շրջանի կնյաղների համար ծառայում եյին իր-  
ուկ վորսի առարկաներ։ 17-րդ դարում տուրքերն իրենց  
դոյտեթյունը պահել եյին միայն Լէհաստանի անտառ-  
ներում։ Ճանապարհորդ Հերթերտեյնը տեսել եր նրանց  
վարչավայի շրջակայքում և նկարել տուրի պատկերը,  
վորը պահպանված է մինչև այժմ (Նկ. 5)։ 1620 թ-  
Լէհաստանում սատկեց վերջին վայրի կովր։

Տուրն իր արտաքինով—իր գանգի կառուցվածքով  
և այլ հատկանիշներով—նմանվում եր ընտանի յեղան,  
բայց ուներ շատ մեծ հասակ և սժաված եր յերկար ու  
սուր յեղջուրներով։ Գիտնականների կարծիքով՝ Հա-  
րավային Ռուսաստանի, պողոլսկյան և Հունգարական  
յեղջուրավոր անասունների, այլի մասամբ Հոլանդա-  
կան, Հյուսիսային գերմանակոն և շվեյցարական անա-  
սունների բոլոր տեսակներն առաջացել են տուրից և  
նրան մոտիկ, յեղակից հանածո լայնածակառ յեղնից,  
վորը նույնապես ապրում եր Յեվրոպայում նախապա-  
տկան ժամանակներում։

Սակայն բացի այդ հակայտկան վայրի յեղնից, Հա-  
րավային Յեվրոպայում ապրում եր նախապատկան  
ժամանակներում գարձալ մի այլ տեսակի յեղ՝ ավելի  
փոքր չափով և կարճ յեղջուրներով։ Նա ևս շատ տո-  
րածված եր Յեվրոպայի Հյուսիսային և միջին բոլոր  
մասերում և ակիցը հանդիսացավ ամբողջ շարք ընտանի  
յեղերի։

Վերջապես Ասիան յեղակ հայրենիքն այն վայրի  
յեղան, վորը հանդիսացավ ընտանի տեսակների նախա-  
հայրը։ Նրա աճյունի մասերը գտնված են Հնդկաստա-  
նում հանածո գրությամբ, և զանկը խիստ կերպով  
տարբերվում է յեվրոպական հանածո յեղների գանգից։  
Այս յեղնից առաջացել են սախական սապատավոր զե-  
րու-յեղները և մի շարք ընտանի յեղջուրավոր անա-  
սունների ասխական տեսակները, որոնց թվում մեր  
կարմիկան և զրբշբայն անասունները։

Կարելի յե յենթաղբել, վոր վայրի յեղների ձևանո-  
սուն և ընտանի գարձնելն առաջացել և տարբեր յերկրը-  
ներում և ատրբեր ժամանակներում, բայց անկասկած  
շատ վաղ ժամանակներում—վոչ պակաս քան 5-6000  
տարի մեր թվականությունից առաջ։ Ավելի ուշ յեղ-  
ջուրավոր անտառնն ամենուրեք հետեւմ եր մար-  
դուն, և ժողովուրդների զանգան գաղթերի ժամա-  
նակ՝ նրա զանազան ցեղերի մեջ կատարվել են խոռո-  
նուրդներ և գուգախանումներ։

Յեզն ու կովն իրենց առաջին անգամ հայտնվելուն  
պես, իրեն մարդու ուղեկիցներ, այնպիսի խոչըն նշա-  
նակություն են ստացել անտեսության և ամեն տեսակ  
առորյա կենցաղի մեջ, վոր մարդկանց կողմից սկսե-  
ցին ավելի մեծ պատվի ու հարգանքի արժանանալ,  
քան մյուս ընտանի կենդանիները։ Շատ ժողովաշնու-  
րի մեջ նրանք մինչև անգամ կրոնական մեծարանքի ու  
պաշտամունքի առարկա յեն դարձել։

Այս տեսակեաից հատկապես նշանակալից և չին  
Յեղիպասոր, ուր «ապիս» սրբազն յեղան յերկրապատու-  
թյունը մեծ գեր և խաղացել այդ յեղը յեղիպատացի-  
ների ամենազլիսավոր սուրբ կենդանին եր։ Ապիսը պի-  
տի ունենար բարբովին սե գունավորում և ճակատին ել  
սպիտակ յեռանկյունի։ բացի գրանից, նա պետք է բա-  
վարարեր զարձյալ 29 պահանջների։ Այսպիսի սուրբ  
կենդանին սպահում եր Մեծֆիսում հոյակառ պարտիզ  
ունեցող հատուկ պարտում և այնտեղ նա սատնում եր  
ընտիր տեսակի կեր, տաք վաննաներ, հրաշալի ջուր,  
անուշնոտությունների բուրմունք։ Ապիսն այնաեղ տպ-  
րում եր 25 տարի։ Յեթե նա այդ ժամանակից առաջ  
չեր մեռնում, այն ժամանակ 25 տարին անցնելուց հե-  
տո, բուրմերը մեռցնում եյին նրան վորեկ առանձնա-  
ցած հարմար տեղում ջրի մեջ խեղելով և ապա նրա  
մումիան թագում եյին Մերապեռմի մեջ՝ թանգ նստող  
բազմապիսի ծիսակատարություններով։

Այդպիսի մեծարանքը կազ ուներ արեկ պաշտա-  
մունքի հետ, և ինքը ապիսը՝ իր սե ճակատի փոնի վրա  
ունեցած սպիտակ բծով հանդիսանում եր արեկ անձ-  
նագորումը։

Արեագարձի միջոցին, յերբ Նեղոսի ջրերն սկսում եյին բարձրանալ, Հանդիսավոր կերպով տոնվում եր ապիսի ծննդյան որը: Սրա հետ միասին ապիսի պաշտամունքը կապվում եր և յերկրագործության պաշտամունքի հետ. յերբ մի նոր փարավոն եր գահ բարձրանում, այն ճամանակ ապիսը լծվում եր գութանին, և Յեղիպտասի տերն ու տնորենը քչում եր ու դաշտում մի քանի ակոս փորում:

Հետաքրքրական ե, վոր կովի կաթը յեղիպտացիները գործածում եյին միմիայն դռաբերությունների համար: Արեւլքի մյուս ժողովուրդների—չինացիների, ճամանացիների, Հնդիկների նման՝ յեղիպտացիներն ել կաթ չեյին խմում, և պիտի յենթալրել, վոր նրանց մոտ կովերը կթվելու սովոր չեյին, քանի վոր զանազան հուշարձանների վրա նրանք պատկերացված են կթի ժամանակ կապված վոտներով (նկ. 6):

#### ՆԿՐ 6

Յեղիպտական ցեղի յերկարեղջուր կոփ: Հսու Սակկարայի (Յեղիպտասում) պիրամիդի հարթաքանդակի:



Չին Հունաստանում յեղը նվիրված եր յերկնքի և արեի աստվածներին—Զեսին և Հելիոսին: Ինքը Զեսը փոխարկվում է յեղան, վորպեսզի Հափշտակե Յեղրոպային: Նույնպես և Հին փյունիկացիների մոտ Բահազի պաշտամունքի մեջ մեծ գեր եր կատարում յեղան կամ Հորթի պատկերը:

Հույների մեջ անասնաբուծությունն արդյունաբերության մի խոշոր ճյուղ եր: Յեղջյուրավոր անտունը գործածվում եր վոչ միայն զաշտերի մշակու-

թյան համար, այլ նաև ծանրություններ փոխադրելու համար, հատկապես զորքերի տեղափոխության ժամանակ:

Հունաստանի շատ առհմերի մեջ յեղան մսի զործածունն արգելված եր, ի նկատի առնելով, անշուշտ, այն հանգամանքը, վոր յեղները մեծ նշանակություն ունեյին յերկրագործության համար: Հույները կաթը գործածում եյին կերպի համար, բայց յուղի մասին գաղափար չունեյին վո՛չ նրանք, վոչ եւ մյուս արեվելյան ժողովուրդները. նրանք գործ եյին ածում բացառապես ձեթ, բուսական յուղ:

Յեղջյուրավոր անաստունը պատմության հետագա ընթացքում ևս համառորեն ուղեկցում եր մարդուն և մեծապես տարածվեց ամբողջ Յեղրոպայում, իսկ ավելի ուշ տարածվեց նաև յեղրոպական յերկրներից գուրս ու հասավ Ամերիկա և Ավստրալիա, ուր նա ուսուչ գոյություն չուներ:

Յեղրոպական ժողովուրդները մեծ ուշագրություն եյին դարձնում յեղան վրա, վորովհեան նրան համարում եյին յերկրագործական տնտեսության խկական սյունը: Զուգախտանման միջոցով և պայմանների փոփոխությամբ Հաջողվեց ձեռք բերել տեսակների շատ թիվ, վորով և նրանք բաժանվեցին Յ կարգի, —բատիրենց նշանակության.—բանվոր (աշխատող) անտուն, վոր ծառայում ե դաշտերի մշակության և բեռներ փոխադրելու համար, կաքնատու անաստուն, վոր հատկացվում է ամենից առաջ կաթ ստանալու համար, և մասցու անաստուն, վոր գործադրվում է միս ստանալու համար:

Սակայն վերջին ժամանակներս զանազան յերկրների կենդանաբուծները իրենց ուշագրությունը գարձրել են այն բանի վրա, վորպեսզի յեղջյուրավոր անաստուներից մշակեն այնպիսի տեսակներ, վորոնք իրենց մեջ ունենան զանազան արժանիքներ, —որինակ մսակաթնային տավար, վոր տա բավականաչափ քանակությամբ կաթ, նաև շատ միս և մսաբանվորական տավար: Այս ուղղությամբ ներկայումս Հաջողվել ե լավ հետեւանքների համեն:

Յեղբողայում ամենալավ կաթնասու անասունի տեսակը՝ հոլանդականը պետք է համարել։ Նո աչքի յե ընկնում իր կաթնասասությամբ ու կաթի հրաշալի հատկությամբ։ Բոլոր անասնապահների կողմից նուրարձր ե գնահատվում։

Հասուկ բարձր հատկությամբ մսացու անասուն բազմացնում են Անգլիայում, —ամենալավ ցեղն այս տեղ համարվում է՝ դյուրգեմյանը։ Այս առավարի ժարմնի այն մասերը, վոր շուկայի արժեք չնւնեն, ինչպես գլուխն ու վստաները, խիստ բնաբանիքի միջոցավ շատ քիչ են զարգացել, գործել են բարակ ու անհան, մինչդեռ մեջքի և յետեի մսու մասերը զարգացել են անսովոր կերպով, —կենդանիները փոխարիկել են խկական մսագնդի։

Յեղջյուրավոր անասունների սուսական տեսակների շարքում անշուշտ պետք է նշել խոլմոցորյան տեսակը, վորն առաջացել է տեղական և հոլանդական տոհմիկ անասունների ցեղերի զուգախառնումից։ Հոլանդական այդ ցեղը բերվել է Արքանդերսկի նոհանդր 1725 թ. Պետրոս Մեծի հրամանով։



Նկար 7. ՅԱՐՈՍԼԱՎՅԱՆ ԿՈՎ

Խորմուգոյան ցեղի ամենալավ կովերն իրենց կովմածքով ու զույնով հիշեցնում են հոլանդական կովերին, բայց մի քիչ բարձր վոտքելով և կովիտ՝ վերջինների համեմատությամբ։ Այդ կովերի կաթն ավելի յուղալի յե, քան հոլանդական կովերինը։ Խորմուգոյան

կովերն այդ պատճառուով ել չոտ սակավապես են, ոիմանում են մեր զաման կլիմային և աչքի յեն բնկնում շատ կաթնուությամբ։

Խորմուգոյային Միության միջին զոտում տարածված գյուղական սովորական անասունը շատ ել բարձր հատկությամբ աչքի չի ընկնում, գլխավորապես վտանինամքի ու վատ կերակրելու պատճառով։ Ամենալավ ցեղը նրանց մեջ համարվում է յարուխավյանը (նկ. 7)։

Յեղջյուրավոր անասունների մսացու տեսակներից մեզ մոտ հոչակված է ուկրայնականը, կամ չերկասկականը, վորը բազմացնում են Ուկրայնայի հանրապետության հարավյային սահմաններում և Կուբանում։ Այդ տեսակը շատ մոտիկ ազգակցություն ունի տափաստանի այն մոխրագույն անասունի հետ, վորը բնակվում է համարյա թե Յեղբօղայի ամբողջ հարավակողմում։ Նո աչքի յե ընկնում խոշոր հասակով, իրանի ուժեղ զարգացմամբ, յերկար յեղջյուրներով և մոխրագուն կամ հարդի գույնով։ Լավ մսացու տե-



Նկար 8. ԿԱԼՄԻՔՅԱՆ ԿՈՎ

ամի և նաև կալմիկյան անասունը, վորը բազմացնում են՝ Ստավրոպոլի, Հաշտարխանի, Վարսնեժե նահանգների սահմաններում և Դոնյան մարզում։ Նա խալարդուտ կամ կարմիր զույն ունի և զանազանվում ե գլխի փոքրությամբ և կարձ ու դեպի իրար ծռված յեղջյուրներով (նկ. 8)։

Միայն Խորհրդային Միության հարավակողմում, Աւելիայում են բազմացնում այժմյան բանվորական անսունը, վորք նույնպես պատկանում է ուկրայնական մոխրագույն ցեղին։ Նա զանազան վում և ուժեղ մարմնով և յերկար յեղջուրներով։ Բանվորական կովերն ունեն վոչ մեծ ու բրդով ծածկված կուրծ ու ծծեր։ Նրանք շատ քիչ են առաջիս։

Մեզ մոտ յեղջուրավոր անասունների բազմացումը հանդիսանում է գյուղատնտեսության խոշոր ճյուղ։ Յեղջուրավոր անասունների ընդհանուր թիվը 1913 թվականին 52 միլիոն եր։ Թուսաստանը մոտև յերկրների համեմատությամբ՝ անասունների թվի տեսակեալից բոնում եր յերբորդ տեղը։ յեղջուրավոր անասունների մեծ քանակություն կա միայն Հնդկաստանում (72 միլիոն) և Միացյալ Նահանգներում (61 միլիոն)։ Բայց յեթե համեմատենք, թե անասունի ի՞նչ քանակությունը է հասնում ամեն մի 1000 բնակչին, ապա թուսաստանը կրոնի վերջին տեղերից մեկը, — 26-րդը, — այնպիս վոր 1910 թվականի տվյալներով՝ մեզ մոտ բնակչության ամեն մի 1000 հոգուն հասնում եր միմիայն 312 գլուխ անասուն, — մինչդեռ Աւրագվայում՝ 7231, Արգենտինայում՝ 4020, Ավստրալիայում՝ 2677, Նոր Զելանդիայում՝ 2050 և այլն։ այս հաշվով թուսաստանն ամենից տվելի մոտ եր Ավստրիային, ուր 1000 բնակչին հասնում եր 320 գլուխ անասուն և Գերմանիային՝ 310 գլուխ։

Մեր տրամադրության տակ ունենալով լայնածավալ և առատ խոտով ծածկված առափաստաններ և ընդհանրապես հողագործությունից աղատ հսկայական տպարածություններ, մենք, հարկավ, կկարողանայինք շատ ավելի լայն զարգացնել յեղջուրավոր անասունների բուծումը, բազմացումը, բայց այդ բանի համար պահանջվում է մեր գյուղատնտեսության բարելավումը և աղբարենակչության կուլտուրական մակարդակի բարձրացումը։

## VII. ՇՈՒՆՆ ՈՒ ՆՐԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Անկառկած շունն այն առաջին կենդանին եր, վորին մարդը սովորեցրեց և ընտանի դարձրեց գեռես հեռավոր ժամանակներում, յերբ նա նախական վորարդ եր։ Յեղշան այդ հին ծագումը՝ իրեւ ընտանի կենդանու՝ հատուկ գժվարություն և ստեղծում նրա պատմության պարզաբանության համար։

Ներկայումս մենք ունենք չների ընտանիքի վայրի ներկայացուցիչների բավականաչափ մեծ թիվ։ Այդ չները ընտանիներին մոտ են, բայց և վոչ մեկը նրանցից չի կարող համարվել ընտանի շան խսկական նախահայրը։ Այդպիսի մոտիկությամբ գեղի շունն աչքի յեն ընկնում չին Աշխարհի զանազան գայլերն ու շնագայլերը (տակալի) և ամերիկական գայլերը։ Դրանցից շատերն իրենց մարմնի ձևով, իրենց գանգի կազմվածքով և այլ նշանակությունով շատ մոտիկ են ընտանի չների զանազան ցեղերին, բայց և վո՛չ այնչափ, վորպեսզի հնարավոր լիներ նըրանց համարել վերջիններիս անմիջական նախահայրերը։

Ծնատանի շան ծագումը բացատրվում է լոկ հանածո մնացորդներով։ Ամենահին հանածո շունն այժմ համարվում է այսպես կոչված «Պուտյատինի շունը» (նրա մնացորդները գտնողի անունով), վորի վանդը գտնված է յեղել նովոգորովի նահանգում, Բոլոգոյե լճի ափին, շատ հին ժամանակաշրջանի քարյա գործիքների հետ միասին։ Այդ շունն իր գանգի կազմվածքով ազգակից և ավստրալիական՝ գինու կոչված վայրենաշանը, վորը իր ծագմամբ շատ հին է։ դինդո շունը Ավստրալիա յետարև մարդու կողմից, հավանորեն, նախապատմական ժամանակներում և այնուղի վայրենացել ե։ «Պուտյատինի շունը» իր մեծությամբ հստի միջակ շան (օք-

պարա) չափ եր և գննվում եր նախապատմական մորդում մոտ արգեն ընտանեցրած վիճակում: Նա տուջացել է, ինչպես յենթագրում են, հարավային մի ժանր զայլից: և ապա իր հերթին նա հանդիսացել է մի ամրող շարք հանածո տեսակների ծագման սկիզբ:

Հանածո «պուտյատինի շների» ժառանգն ամենից առաջ «տորֆավայրի» շղիցն է, վորի վոսկրները գրանվում են Հյուսիսային Յեղրապայի տորֆավայրերում՝ ավելի ուշ ժամանակաշրջանի քարյա գործիքների հետ խառը: «Պուտյատինի շների» մի այլ նախահայր հանդիսանում է բրոնզյա գտրի շունը, այսինքն այն ժամանակվա, յերբ նախապատմական մարդն արգեն ոգովում եր վո՛չ թե քարե, այլ բրոնզե գործիքներով: Մեզ մոտ Լադոգյան լճի ափերին գտնված հանածո շունը— «ինստրանցի շունը»—նույնպես տուջացել է «պուտյատինի շան» և գայլի զուգախանումից և վերաբերում է գեռես քարե գտրին:

Դինդոյին և «պուտյատինի» հանածո շանը մոտիկ են այն անտուն «պարիս շները» («արան սօնակ»), վոր տյնքան մեծ քանակությամբ բնակվում են՝ Թյուրքիայի, Փոքր Ասիայի, Պաղեստինի և Յեղիպտոսի քողաքներում, —երանք ժամանակակից շների շարքում պահպանել են հնագույն գծեր:

Տորֆավայրի շղիցից տուջացել են ժամանակակից Հյուսիսային լայնաները (լայնա), վոր ծայրագույն Հյուսիսի ժողովուրդների համար ծառայում են ուղեգնացության համար, նույնպես և ժամանակակից շղիցերներն ու պինչերները (պինչեր): Հնագույն Յեղիպտոսի ժամանակներից պահպանված շների մասմիաները ցույց են տալիս յեղիպտական շների մի քանի շեղերի և տորֆավայրի շների միջև յեղած նմանությունը:

Բրոնզե գտրի շունը, ըստ յերեսութին, սկիզբն է հանդիսացել զանազան հոտի շների, իսկ նրա և գայլի զուգախսունման միջոցով բազմացրել են՝ Մեն-Յերնարի, Լեռն-բերգի և մոլոսոյան զողերի խոշոր շեղերը: Մեր ժամանակակից դոգերը միջին Յեղիպտայում բազմացրել են վոզորի բուրդ ունեցող խոշոր հոգվական շր-

ներից: Նրանց նախահայրերը, խոշոր գոգանման շները, հայտնի յեն յեղել գեռես բրոնզե գտրի հանածո մնացորդներից:

Բարակների (նօրայե) զանազան շեղերը, վոր ունեն յերկար ձգված մարմին, բարձր վոաներ և խիստ յերկարացած սուր գանգ՝ առաջացել են, բայց յերեսութին, զայլերին մոտիկ՝ հատուկ հանածո նախահորից: Բարակները բերված են գեռես յեղիպտացիների կողմից: Նրանց պատկերները կան յեղիպտական հուչարձանների վրա: Այժմ բարակների զանազան շեղեր տարածված են Միջերկրական ծովի ափերին, Սպանիայում, Կրետե կղզու վրա, Արարիայում, նաև Հնդկաստանում: Խուսական բարակն առաջացել է, ամենայն հավանականությամբ, հոտի շան (օվարա) և գայլի զուգախսունումից: Նրան մոտ ե կանգնած պարսկական բարակը, վոր նույնպիսի ծագումն ունի:

Յեղիպտասումն ել աշխատել են ունենալ այլ բնորոշ տեսակի շուն—կարճասրունք, ուղղահայրաց ականջներով—տականները:

Նրանց նկարները գտնվում են յեղիպտական հուշարձանների վրա (նկ. 11), բայց թե վորպիսի վայրենի կամ հանածո շնից են նրանք տուջացել, դժվար և ասել:

Յերբ յեղիպտացիներն տուջին անգամ Ամերիկա վոտք գրին, նրանք այնուեղ արգեն շատ զատին, մինչեւ անգամ զանազան տեսակի, յեղիպտական շների նմանությամբ: Մեքսիկայի հին բնակիչների ինկերի—շի-



ՆԿՐ 9

Յեղիպտական տարսու, բայց թերեւում մի հին զամբարանում գտնված պատկերի, թերեւում:

բիմների պեղման ժամանակ գտնվեցին այնպիսի գտներ, վոր նման են հոտի շների և բուլղոզների գտների: Հետաքրքրականն այն է, վոր բոլոր այդ շեղերը տուջացել են յեղիպտականներից միանգամայն անկախ, և նրանց նախահայրերը յեղել ե տեղական մեքսիկական ժամրիկ գտյլը:

Այսպիսով բոլոր նախապատմական գյուղերն ու պատմական փաստերը վկայում են այն մասին, վոր չների զանազան ցեղերը ծագել են տարբեր յերկրներում—զանազան տեսակի վայրենի նախահայրերից։ Մարդն իր յուրաքանչյուր բնակավայրեց առել ու սովորեցրել ե այն տեսակ վայրի չներ, վոր գտնվել են մերձակայքում։ Իսկ հետագայում այս սովորեցրած երնտանի գարգրած զանազան ցեղերը, վոր ուղեկցում ելին մարդուն ամենուրեք նրա անդամակիսությունների միջոցին, կարող ելին հանդիպել իրար, միախառնվել ու տալիսանուրդներ։ Այս միջոցով, ամենայն հավանականությամբ, առաջացել ե չների ցեղերի այն մեծ քանակությունը, վոր մենք հանդիպում ենք պատմական ժամանակներում և հատկապես ներկա ժամանակում, —սկսած չինական մանր չնիկներից և կինդ-չարլներից (Կինդ-չարլ) մինչև դանիական վիթխարի դոգերը։

Զանազան տեսակի չներ առաջ բերելու համար մասնակցում ելին և՝ վորսորդները, և՝ հովիվները, և՝ ուղղակի չուն սիրողները, աշխատելով զերազանցել մեկը մյուսին վորեն տարրորինակ տեսակ ստանալու համար, յերբեմն տղեղ, և յերբեմն ել, մինչև անդամ տնձոռնի, ինչպես մոսկերը և բուրդոպները։

Զանազան դեպքերում մարդու համար հարկավոր են չան ամենազանազան առանձնահատկություններն ու հատկանիշները, —կամ ույժը, ճարպիկությունը և շարությունը, կամ չատ զարգացած զգայությունը, կամ արագավագությունը, կամ խաղասիրությունը, լազ բնավորությունը և ամեն տեսակ բան սովորելու ընդունակությունը։ Այդ պահանջների համաձայն ել առաջացել ե ընտրանքը և մշակվել են չների այդ բաղմապիսի արտաքին ու ներքին հատկությունները։ Այսպիսի ճանապարհով են ահա ստացվել չների այն հարյուրավոր բազմազան ցեղերը, վոր մենք հանդիպում ենք այժմս զանազան յերկրներում։

Չների ժամանակակից ցեղերն այնքան բազմապիսի յեն, վոր նրան բոլորին այսուհետ թվել մենք չենք

կարող և կանգ կառնենք միմիայն նրանց վրա, վոր համեմատաբար ավելի կարենք են մարդու համար։


Անկասկած, ամենամեծ ոգուազը մարդուն բերում է այն չունը, վորը գտնվում է ծայրագույն հյուսիսում և ուր նա հանդիսանում է հաճախ միակ ընտանի կենդանին ու ծառայում է վորակս փոխագրության միջոց։ Հյուսիսի անսահման տունդրաները ըուստկանությամբ այնքան աղքատ են, վոր հաճախ և՛ սակավապետ հյուսիսային յեղջերուն չի կարողանում իրեն համար բավականաչափ քանակությամբ կերակուր գտնել։ Մյուս կողմից հյուսիսի ցետերն առատ են ձկնով, վորը չուսացնում են և չինում այսպես կոչված «յուկորա»։ Ոերջինս չան համար կարող է ծառայել վորակս հրաշտի կերակուր։ Սրա հարմարությունը նաև այն է, վոր չըներին բավականացնող մի քանի որվա «յուկորա» պաշտը նրանք հեշտությամբ կարող են կրել, որուհիսիսին նաև հեծյալին ու սրան անհրաժեշտ բոլոր բաները։ Այսպիսով չները կարելի յէ կտառարել յերկարածական հանապարհորդություն հյուսիսի կատարյալ գտառքի և ամեմարդաբնակ անտարաներով, ունենալով իրեն հետ կերակրի պաշտը։



Նկար 10. Սիբիրական լազու

Հյուսիսային լծկան չները զոհապան լոյկաներն են, վոր ուժեղ են և բավական խոշոր, ունեն ուղղութաց տերմանջներ և խիստ ու առօք բուրգ (նկ. 40): Նրանք շատ զիմացկուն են, սակավապես և վազքի մեջ ել անխոնց: Թեթև ու նեղ սահնակը կամ «հարսա»-ն են լրծում 10-12 շուն, զույգ-զույգ միմյանց յիշեից: Դասպանը կամ «կայութը» վոչ մի սահծ չունի և չների արշավը զեկավարում է լոկ բարսելով: Աւսոի և չների առաջին զույգը—«առաջնորդները»—ովեաք և լով ոսվորեցրած լինի և պետք և հնապանդիմի տիրոջ ձայնին: Կայութի ձեռքին կա միայն մի կարճ վորյո յերկաթյան ծայրով—«ոշտոր»-ով, վորր ծառույթ և իրրե արգելակ (տորմող) սահնակները կանոնեցներու համար և մասամբ ել նրանց գերքը պահելու համար, յերր կողքի յեն ծալվամ: Յեթե ձանապարհը լով և՝ այսորին նորայտվ կարելի յի ասավատից մինչեւ կեսոր անցնել քառասուն վերսա, և քիչ հանգստանարաց հետո մինչեւ յերեկո նույնքան տարածություն ել կարելի յի անցնել:

Եները լծվում են վոչ միայն Հյուսիսում, այլ նուև Արևմտյան Յեփրապայի շատ տեղերում—Հորակիայում, Բելդիայում, Հյուսիսային Ֆրանսիայում: այդ



ՆԿԱՐ 11. ԱՌԽԱՎԱՆ ԲԱՐԱԿ լեբեճա՝ ՇՈՒՆ

տեղերում զանազան խոշոր անսակ չներն ուղարկործվում են թեթև սայլակներով վորքը բեռներ վոխաղքելու համար.—այսպիս կաթնավաճառ կանայք կաթը չուկա առներու համար՝ հաճախ բանեցնում են նրանց:

Դեռ վաղ ժամանակներից սկսած շանը մեծ նշանակություն ուներ՝ հստերը պահպանելու համար, և այդ նպատակով ել ամենից շատ զործադրվում ելին հստի չների զանազան անսակները,—վոր խոշոր, ազգահայոց ականջներով և կողիտ խճճված բրդոտ չներ ելին: Նրանք նմանապիս հրաշալի պահպաններ են առան համար: Վերջին ժամանակները զերծանական հստի չները և զորքերման-պինչերները ծառայում են նոն վաստիկանաններում և մաքսատներում,—սրանք իրենց նույրը զգայությամբ հետապնդում են զողերին ու մաքսանենուներին:

Եների զգայնությունը զործադրվում և նաև պատերազմի ժամանակ, սանիստար-չները հիմնալի կերպով կարազանում են վորոնել ու գանել վիրավորներին: Հայտնի յե նույնապիս վոր սեն-բերնարներն իրենց առնուն սանցել են՝ ճանապարհորդներին Հյուրբնկալորդ այն վանքից, վորը գանվում և Արքերի Սեն-Բերնարյան բարձր լինաձանապարհին: Վանականներն այս վանքում չները սրահում ելին մալրված ճանապարհորդներին գանելու համար: Նրանք շատ մարդկանց կյանք են ապատում, հատկապիս ձմեռ ժամանակ, յերր այս բարձունքներում հաճախ մի քանի որ անրնզհատ անզի յին ունենում ձյան վոթորիկներ:

Ծունը մեծ ծառայություն և մատուցում մարզուն նաև վարսի ժամանակ: Մելպակները (յերկարավիզ անդիմական բարակ), պայմանակերները (անդիմական բարսել) և համբորակ չները (ալուան և ծառ) վորոր չետապնդում են զգայությամբ, խրանեցնում են նրան և բիրում սպանված վիճակում, զոնչիները (գոնչա սօնական): —մեծ գլխով և կախ ընկած ականջներով բարակ, վոր հետապնդում և վորսին բարձր հաջոցով)՝—սրայունչ բարակներով վրա յին հասնում վորսին՝ վախչելու ժամանակ: Բարակներով վորսի յերեկո՝ զայլերի, ազ-

վեսների, նապաստակների՝ վրա առաջ շատ տարածված եր (նկ. 11): Ազգիներին և գորշակներին վորջերից դուրս քաշելու համար գործ ելին ածում տականերին, վոր ունեյին յերկար մարմին և գետինը փորելու հարմար—դեպի դուրս պրծած վոտքեր:

Վերջապես չների շատ տեսակներ բազմացրել են ուղղակի հաճույքի համար՝ իրեն սպորտ և իրեն սիրողների իրար հետ ունեցած մրցակցության հետեանք: Նրանք հատուկ վորեն գործի չեն ծառայում, բայց ինչպես մարդու խսկական բարեկամներ զվարձացնում են նրան և ընծայում շատ հաճելի բոպեներ: Այսպես են չների շարքում յեղած վիթխարի զանազան զոգերը և նյու-ֆառնդենդները, անձունի և իրենց անձունիությամբ հենց հաճելի բուլգոզներն ու մոպսերը. իրենց խելքով աչքի ընկնող, ընդունակությունը վարժության յենթարկվող պուգեները, ժիր և ուրախ ֆոկուտերյերները, թագոտ շպիցները և սենյակի թզուկ-շնիկների բազմաթիվ տեսակները, վոր հանդիսանում են խոկան խաղալիքներ,—բոլոնկաները, կինդ-չարլոները, չինական չնիկները և այլն:

### VIII. ՇՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՅԵՎ ԻՆՉՈՎ ԵՆ ՆՐԱՆՔ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՄԱՐԴՈՒ ՀԱՄԱՐ

Շունը—մարդու այդ մերձավոր բարեկամը—լինում է համարյա թե ամեն մի ընտանիքում: Նա այնպես սերտ շփոռմն ունի մարդու հետ և այնպես շատ և տարածված, վոր նրա հիվանդություններն ել չեն կարող չհետաքրքրել յուրաքանչյուրին, վորովհետեւ ամեն մեկը մեղանից հարկադրված և շփկել նրա հետ: Շան մի քանի հիվանդություններն անմիջապես վտանգավոր են մարդու համար, ուստի և նրանց ծանոթանալը յուրաքանչյուր մարդու համար ել ոգտակար է:

Ամենից շատ չները հիվանդանում են այսպես կոչված «չումայով»—ժանտախտով, վորը, սակայն, վոչ մի կապ չունի մարդու ժանտախտի հետ: Այս հիվանդությունը վարակիչ է, չներն այն սահնում են մեկը մյուսից, բայց նրա խսկական պատճառները դեռևս շիհաջողել գտնել: Սովորաբար այդ հիվանդությունը հայտնվում է լակատների կամ ջահել չների նկատմամբ, և յեթե նրանք հաջողությամբ կարողանում են տանել հիվանդությունը, ապա այլևս չի կըկնվում այն:

Շների ժանտախտը՝ աղիքների, թոքերի կամ ջրկերի հիվանդությունների ձեռվ և լինում: Հիվանդության բոլոր այդ ձեռերի ժամանակ նկատվում է, վոր աչքերից ու քթից ծորում են՝ թարախ ու լորձունք և մարմնի տաքության աստիճանն ել բարձրանում է: Առանձնապես վտանգավոր է ժանտախտի ջղային ձեր, յերբ չներն ընկնում են՝ մարդու «ընկնավոր» հիվանդության նման: Կենդանին թռչկոտում է, սարսափելի կերպով հաջում, կրծտացնում ատամները և թափալվելով չորս կողմը՝ զարնվում և շրջապատող առարկաներին: Հաճախ այս հիվանդությունը մահով է վերջանում:

Յեթե շանք հիվանդանում և ժանայիստիկ, առենից լավն այն է, զոր անառնաբուժի մոտ տարվի, քանի զոր հիվանդության ընթացքը բազմապիսի յել լինում և առհասարակ հոգածարությունն ել զժվար է:

Մարդու համար վտանգավոր է չների կաշվի չի-  
վանդություններից մեկը—չիք (սրբազն լիայ)։  
Հիվանդությունը, վորից շան բուրդը թափառմ է և  
մարմնի վրա առաջանում լերկ տեղեր, իսկ այդ հիվան-  
դությունից կարող են թափալիք մարդու մազերը և ամ-  
բողջ միբուժն ու բեղերն ընկնել։ Այդ հիվանդությունը  
հայտնվում է մի տեսակ սունկի կով (բրիճա, վոր առ-  
բոծվում է կաշվի մեջ և առաջացնում մազերի թա-  
փումը։ Մարդը հիվանդ շան հետ շփվելով, հեշտու-  
թյամբ կարող է վարակվել նրանից։ Ել ավելի վտան-  
գավոր է մարդու համար ճիճուններով վարակումը։ այդ  
ճիճունները կոչվում են եխինիոկրի և հաճախ լինում են  
շան աղիքների մեջ։ Շներն այդ ճիճվով վարակվում  
են սպանվանոցի թափթփուկներն ուտելով և սովորա-  
բար վարակումը շատ զորեղ է լինում։ —այդ ժամանակ  
աղիքներն ամբողջովին լցված են լինում քիչ նկատելի  
մանրիկ ճիճուններով։ Նրանց ձվիկները գուրս են գալիս  
աղիքից կղկղանքի հետ միասին, կողչում են մազերին։  
ապա շունը լիցում է և նրանք հայտնվում են արգելն նրա-  
նեղի վրա և քթի լորձունքի մեջ։ Նրանք այնքան մանր  
են, վոր նրանց նկատելի անկարելի յե։ Յեթե այսպիսի  
ձվիկներն ընկնեն մարդու ձեռքի վրա, և ապա կերպարի  
հետ՝ նրա աղիքները, —նրանցից կառաջանան բեղմա-  
վորված ճիճուններ, վոր հավաքվում են լարդի մեջ և  
այնուղ փոխարկվում մեծ եխինոկրի վաւչեկի (օչի-  
հօքանական ուզարք), վորից բաղմաթիվ ճիճուններ են ա-  
ռաջանում։ Եխինոկրի վարակված մարդու լարդը  
կարող է վերածվել սպունդանման զանգվածի—այնքան  
շատ փուչիկներ ե պարունակում նա իր մեջ։ Այսպիսի  
վարագային մարդուն փրկելն անհնարին է, —նու ար-  
գեն գատապարագած և առապալից մազվան։

Ի նկատի ունենալով այն հանդամանքը, վոր յերբեք չի կարելի ճշռորեն խմանալ, թէ չունի վարակվել ե-

Ճիճուներով, ավելի լավ ե թույլ չտալ, վոր շունը լիզի  
մեղ, —և նրա հետ գործ ունենալուց հետո՝ ձեռքերը  
լվանալ և հոգ տանել, վոր նբանցից վոչ մի բան չընկնի  
կերակրի մեջ:

Շան ամենասարսափելի հիվանդությունը՝ կատա-  
ղությունն ե կամ ջրվախությունը։ Կատաղությամբ  
կարող են հիվանդանալ վոչ միայն շները, այլ նաև կա-  
տուները, ձիերը, կովերը, ճագարները, գայլերն ու  
մարդը։ Կատաղության մանրեն—միկրոբը դեռևս չի  
գտնված, բայց լուի Պաստերի հանձարեղ ջանքերի և  
հայտնությունների շնորհիվ, հաջողվեց դանել հատուկ  
պատվաստելու մի միջոց՝ մարդկության այդ պատու-  
հասի դեմ։

Ինչպես կենդանին, այնպես ել մարդը կարող էն  
վարակվել արդեն կատաղությամբ բռնված կենդանու՝  
ամենից հաճախ շան կծելուց: Կծելուց հետո յերկար  
ժամանակ՝ 2-3 շաբաթ, յերբեմն և մինչև 2-3 ամիս կա-  
տաղությունը յերեան չի գալիս, — հիվանդությունը  
թագնված ըջանում ե գտնվում: Այունհետեւ կենդանին  
հանկարծ հիվանդանում ե, սկսում ե աննորմալություն  
ցույց տալ, ծածկվել ե խուսախել տնից, հարձակվել  
մարդկանց և մյուս կենդանիների վրա և կծել նրանց:  
Հետո սովորաբար վրա յե հասնում կաթվածը և մահը:

Արդեն կատաղած կենդանին՝ այլև չի կարող բռւժ-  
վել, և նրան պետք է սպանել: Կատաղած կենդանու կծե-  
լու դեպքում, անհրաժեշտ է ըստ Հնարավորության չուտ  
ձեռնարկել կատաղության դեմ՝ նախապաշտպանական  
պատվաստելու միջոցին, վորը մեծ մասամբ փրկում է  
մարդուն. Հակառակ պարագային՝ նա մատնված է ան-  
խուսափելի մահվան սպառնալիքին:

Ծները են լինում մարդկանց համար վտանգալոր և  
այլ զանազան վարակիչ հիվանդություններով.—որի-  
նակ յեղել են դեպքեր, վոր մարդը շներից վարակվել է  
սիբիրական ախտով։ Բացի դրանից շները—ինչպես և  
կատուները—մարդուն հատուկ վարակիչ հիվանդու-  
թյուններով չիվանդանալով հանդերձ, կարող են շատ

անդամ վարակման վոխագրողներ հանդիսանալ, ուստի  
և նրանց հետ գործ ունենալուց միշտ պետք է զգուշանալ  
ու չափից ավելի մոռափկ չչփել:

## Խ. ԿԱՏՈՒՆ ՅԵՎ ՆՐԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Կատուն համարյա թե միակ ընտանի կենդանին ե,  
վորի ծագման մասին գոյություն չունի վոչ մի տարա-  
կուսանք, նա ստույդ կերպով պարզաբանված է:

Կատունի հայրենիքը Յեղիպտոսն է յեղել: Ասիայում՝  
սկզբներում նա հայտնի չեր: Յեգրոպայում՝ կատուն  
յույս և ընկել միայն մեր թվականության սկզբում, իսկ  
Յեգրոպայի հյուսիսյին կողմերում հայտնվել և մինչև  
անգամ հազիվ միջին դարերում:

Այնուամենայնիվ կատուն ամենահին ընտանի կեն-  
դանիներից մեկն է. նրա ընտանի վիճակի պատկերն ար-  
գեն կտ յեղիպտական արվեստի հնագույն հուշարձան-  
ների վրա, վոր պահպանվել են մեր թվականությունից  
4000 տարի առաջ յեղած ժամանակներից:

Բնուանի կատուն նախահայրը յեղել և նուրիսական  
կատուն, վորը մինև այժմ ել գտնվում և նուրիսայում և  
Հյուսիսային Աֆրիկայում: Սա իր հասակով և իր ար-  
տաքինով շատ նման և ընտանի կենդանուն, — նրա բուր-  
ուր զեղնավուն է, նման ավագի գույնին: Նա ընտանի  
կատունից զանազանվում և նրանով, վոր ունի սև վոտներ  
և ականջներին վորքրիկ ծովեր: Վո՞չ մի կասկածի տեղիք  
չպիսի առ այն հանգամանքը, վոր հենց այդ տեսակն են  
սովորեցրել յեղիպտացիները. և գարձրել ընտանի կտ-  
ուու: Նրանք սովորեցրել են, սակայն, և վայրի կատունի  
մի այլ տեսակը — աֆրիկական ճանձային լուսանը (քայլ),  
բայց, բայց յերեսայթին, նա ավելի քիչ պետքա-  
կան եր, վորովհետեւ թռչնաբակերում առաջ եր բերում  
մեծ ավելումներ: Հավանական է, վոր լուսանի և նու-  
րիսական կատունի զուգախառնումից առաջացել են նոր  
տեսակներ: Թե մեկ և թե մյուս կատուների մարմինները  
հաջողել են գտնել Յեղիպտոսի գերեզմանատներում:

Մեր որերից 4000 տարի առաջ, փարավոնների 12  
հարստության ժամանակներում, կատուն արգեն շատ

տարածված եր Յեղիպտոսում և Համարվում եր սուբր  
կենդանի: Նա նվիրված եր Բաստ աստվածուհուն, վորը  
պատկերացվում եր կատվի գլխով: Բաստը—լուսնի,  
վորդեծնության և պտղաբերության աստվածուհին և,  
և անկասկած ե, վոր կատվի բեղմնավորությունը և գի-  
շերային կյանքի ձևը Հատկապես պատճառ դարձնի  
նրան նվիրելու այդ աստվածուհուն:

Բաստ աստվածուհու տաճարը գտնվում է Բուբաս-  
տիս քաղաքում և Յեղիսկոսի ամենահարգու ու շատ այ-  
ցելուներ դրավող տաճարներից մեկն եր: Այստեղ տեղի  
ունեցող տոնակատարություններին մասնակցելու հա-  
մար չտապում եր աղոթողների մեծ բազմություն՝ տ-  
մեն կողմերից: Հույն պատմիչ Հերոդոտի ասելով ուխ-  
տավորների թիվը հասնում էր յերբեմն 700,000 մարդու:  
Տոնակատարությունների ժամանակ տեղի ելին ունե-  
նում՝ և՛ պարեր, և՛ խրախճանքներ:

Ուխտավորները սրբազան կատվին՝ ընծայաբերում  
ելին կատուների արձանիկներ, վոր շինված ելին՝ կա-  
վից, արծաթից և մինչև անդամ վոսկուց։ Վոմանք ըն-  
ծայում ելին իրենց մեռած սիրելի կատուների զմբանած  
մարմինները, և զարմանալի չե, վոր Բուրաստիսի ավե-  
րակների միջից բացվել ե կատուների մարմինների մի  
մեծ գերեզմանատուն։ Հենց այդտեղ ել գտնվել են տ-  
մենազանազան գիրքերով նկարված կատուների շատ  
անդրիներ։

Բուրբաստիսի հարկան Հելիոպոլիս քաղաքում յերկրագության գլխավոր առարկան արևի աստված Ռա-ն եր, վորը համարվում եր Բաստ աստվածուհու ամուսինը: Սա ես պատկերացվում եր կատվի կերպարանքով, այդ այն պատճառով, վոր իրեն թե կատվի աչքերի մեծանալն ու փոքրանալը կախված են յերեկվա լուսատուի շարժումներից: Այդ գիտողությունը ճիշտ է: Կատվի բիբերն իրոք կեսորին փոքրանում են և յերեկոյան գեմ լայնանում, իսկ արեւը մայր մանելուց հետո գառնում են շատ խոշոր: Այս հանգամանքը նպաստում է կատվին, վոր նա գիշերը լավ տեսնի:

Թե ինչպիսի հարդանք եր վայելում կատուն Յեղիպտոսում, —այդ յերեսում և այն բանից, վոր մահվան

պատժի յեր յենթարկվում նա՝ ով կսպաներ նրան, ինչ-  
պես և սուրբ իրիսին—յեղիպտական արագիլին։ Այս  
պատիժը գործադրում եր մոլեգնած ամբոխը տեղն ու  
տեղը—հենց հանցագործության վայրում, հաճախ  
մինչև անգամ առանց նախնական հարցաքննության։  
Դրա համար և Յեղիպտասում յուրաքանչյուր վոք, յերբ  
սատկած կատու յեր գտնում, կանգնում եր նրանից քիչ  
հեռու տարածության վրա, կանչում եր ժողովրդին և  
բղավում, վոր ինքը կատվի մահվան համար անմեղ է։

Հին հույներն ու հոռմայեցիք անծանօթ եյին դեռևս  
կատվին, և նրանց տների մկները վոչնչացնում եյին լոր-  
տուներն ու աքիսները, վորոնց աշխատում եյին ձեռնա-  
սուն դարձնել, սովորեցնել: Աքիսները սակայն այնքան  
ել անվտանգ չեցին ընտանի թռչունների համար, ուստի  
և առանձին համակրանք չեցին վայելում: Միայն մեր  
թվականության 1 դարու վերջին ե կատուն հայտնվում  
հոռմայեցիների մոտ և սկսում ե նեղել յերկու ախոյան-  
ներին—լորտուին և աքիսին: Հետագա 3-4 դարերի ըն-  
թացքում նա հետզհետե տարածվում է: Պատմական այլ  
տվյալների հիման վրա՝ կատվի հայտնվելը Հունաստա-  
նում, առանձնապես Ապուլիայում, տեղի յե ունեցել  
մեր թվականության 5 դարում: Այն ժամանակվա հու-  
նական շատ անոթների վրա՝ կանանց մեծ համակրանքը  
վայելող կատուն նկարված ե իբրև ընտանի կենդանի:  
Հինգերորդ դարու վերջերին Յեղիպտոսի հետ մշտական  
կապ ունեցող հարավային իտալիայի Տարենտի և Բե-  
գիայի գրամների վրա կան խաղացող կատուների պատ-  
կերներ:

Առանձնապես արժեքավոր դարձագլ կատուն այս  
ժամանակ, յերբ տեղի ունեցավ արևելքից չարժվող աղ-  
գերի մեծ դադիվանը. այդ ժամանակ եր, վոր առնետների  
(կրյսա) անհամար խմբեր հեղեղեցին Յեվրոպան, ուր  
մինչ այդ նրանք բնավ հայտնի չեյին: Առնետների մա-  
սին յեղած առաջին տեղեկությունները վերաբերում են  
12-րդ դարին: Ակներեւ ե, վոր այս վտանգավոր կրծող-  
ների տարածվելն առիթ տվեց և կատուների ընդարձակ  
ծավամանը լեվրոպական բոլոր յերկրներում:

Հայութանի յէ Արքական կատուն Արեւելքում հայտնի յէ յե-  
կատ յերեսույթին կատուն Այսպես մեր թվականության 350 և  
դեւ ավելի առաջ։ Այսպես մեր թվականության 350 և

400 թվականների միջև յեղած ժամանակաշրջանին վերաբերող՝ վանդալների շիրմներից մեկի մեջ գտնված մարդու կմախաքի կրծքի վրա յերկացել է կատվի կմախք. այդ հանգամանքն ապացուցանում է, թե ինչպիսի սեր է վայելում այդ կենդանին Յելքոսպայի նոր յեկվորների և նվաճողների կողմից: Կատուն մեծ համականք եր վայելում նաև մահմեղականների մոտ: Ինքը մուռուլմանական կրոնի հիմնադիրը—Մահմեղը—վոր ապրում եր 571 թ. մինչև 632 թվականը, կատուների մեծ սիրահար եր, և, ինչպես ավանդությունն է ասում, մի անգամ, յերբ նրա սիրելի կատուն քնած եր նրա զգեստի թեհեր վրա, և ինքը հարկադրված եր հեռանալ, նա կտրեց թեքը, վորպեսզի չխանգարի իր սիրելի բունը:

Միջին դարերում կատուն արդեն տարածված եր ամբողջ Արևմտյան Յելքոսպայում: Կաթոլիկականության ծագման և ինկվիզիցիայի ժամանակներում՝ այդ ընտանի կենդանին հարկադրված յեղափ կրելու շատ ծանր ժամանակաշրջան: Իր գիշերային կյանքի և իր աչքերի լուսավորության պատճառով, կատուն համարվեց գժոխքի վորդի, կախարդների և վհուկների ողնոյ, պիղծ վոդու ծնունդ:

Այն ժամանակներում բազմաթիվ գտակը ելին ձեռնարկում «վհուկների» դեմ, վորոնք կասկածվում ելին այն բանում, թե նրանք հարաբերության մեջ են պիզծ հոգու հետ և կախարդություն են անում: Այս գտակը ժամանակի համարի հանգես ելին բերում նաև կատվին, վորը և «վհուկների» հետ միասին խարույկն եր ձգվում:

«Փվանի որը»տանին Մեց քաղաքում այդ ժամանակներում յուրաքանչյուր տարի տասնյակներով կատուներ ելին այրում: Ֆլանգը բայցում, Բաղր քաղաքում, գոյություն ուներ ել ավելի զածան սովորություն: Մեծ պասի յերկրորդ շարաթվա չորեքշաբթի որին այնուեղ կոչվում էր «կատվի չորեքշաբթի». այդ որը կատուներին բարձր աշտարակներից ներքեւ ելին գլորում: Այդ սովորութի հիմքն իրեն թե դրել է կոմս Բարդվին Փրանգիացին գետիս 962 թվականին: 1674 թվականից այդ սովորութը չեր գործադրվում, բայց նորից սկսվեց կի-


բառվել 1714 թվականին: Ասում են, վոր մինչեւ անգամ 1868 թ. իպրի աշտարակից կատուներ եյին վար ձգում:

Միջին դարերն անցկացնելով, կատուն հաջողությամբ տարածվեց յելքոսպական բոլոր յերկրները և յելքոսպայիների հետ միասին տարածվելով և ուրիշ մայր ցամաքներ, ուր առաջ նրանք դոյցություն չունեյին: Ներկայումս կատուն ամբողջ յերկրագնդի վրա հանդիպանում է վորպես մարդու մշտական ուղեկիցը և կանաց հատուկ սիրելին:

Կատուներին, ինչպես և չներին, մինչեւ անգամ հատուկ կերպով բազմացնում են սպորտի համար, այսինքն աշխատելով առաջացնել նոր, վորեւ բանով նշանակալից, հատուկ գեղեցիկ տեսակներ: Անգլիայում այդ նպատակի համար կան մինչեւ անգամ սպորտամեն—սիրողների հատուկ ակումբներ. նրանք առաջ են բերում ազնիվ տեսակներ, կազմակերպում են ցուցահանդեսներ, մրցություններ, պարզեատրում են ամենալավ տեսակն առաջացնողին: Անտպատան կատուների համար կառուցանում են հատուկ ոթեաններ, ուր նրանք պատրարկում ու կերակրում են: Ժնեվում կա մինչեւ անգամ հատուկ բարեկործական բնկերություն, վորն պիտի վոդում և քաղաքի անտպատան կատուների. կերակրելու գործով:

Շնորհիվ այն հանգամանքի, վոր առաջ յեկան կատուների այդպիսի սիրողներ,—այն մի քանի զարերի ընթացքում, յերբ կատուն տարածվեց Յելքոսպայում,—բազմացրին մեծ քանակությամբ կատուների տեսակներ, վոր զանազանում են միմյանցից գլխավորապես գույնով, բրդի հատկությունը, յերկար աղվամազու պոչով, աչքերի գույնով և այլն:

Կատուների ամենազեղեցիկ տեսակներից մեկն է անգորականը, —նա սպիտակավուն և, յերկար, փափուկ և մետաքսանման մաղերով և խիտ թափու պոչով (նկ. 12): Այդ կատուները բարձր են զնահատվում սիրողների կողմից, սակայն շատ փափկաներ են ու յերես առած, —նրանք վախենում են ցրտից ու խոնավությունից և հեշտությամբ հիվանդանում են վատ կերակրից:



ՆԿԱՐ 12 ԱՆԳՈՐՍԿԱՆ ԿԱՏՈՒ

Վոչ պակաս գեղեցիկ են պարսկական կատուները, վոր ունեն յերկնագույն խառնուրդով մութ-մոխրագույն մաղեր և մթագույն աչքեր։ Նրանց մազերը ևս յերկար են և պարանոցի վրա առաջացնում են ոճիքի կամ բաշի նման մի բան։

Մեր՝ ռուսական տեսակների մեջ առանձնապես հռչակված են սիրիրյան կատուները, վոր սովորաբար մոխրագույն են, բայց խիտ մետաքսանման և յերկար բրդով և աղվամագոտ պոչով։ Նրանք ավելի դիմացկուն են, քան անգորական կատուները, և նրանցից ել պակաս գեղեցիկ չեն։

Կատվի որինակով կարելի յէ տեսնել, թէ ինչպես պատմական ժամանակների ընթացքում կարող է սովորել և ընտանի կենդանու դրության հասնել վորեկ վայրենի կենդանի, թէ ինչպես նա կարող է տարածվել ամբողջ յերկրագնդի վրա, և ինչպես կարող են մշակել ու ստանալ նրա զանազան տեսակները, յեթե միայն մարդի կամենա զբաղվել նրանց բազմացումով։

14993

## Հ. Ա. Խ. Հ. ՊԵՏԱՐԱՏ

## «ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱՅԻՑ» ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍՔԸ

1.	Գաբրիելյան Ռ.—Միջատակեր բուլսեր . . . . .	20	կ
2.	Լեբեզեվ Խ. Կ.—Ինչպես և առաջացել յերկերը . . . . .	30	»
3.	Գաբրիելյան Ռ.—Ավելիանի թագավորը . . . . .	15	»
4.	Կարինցեվ.—Ելեքտրիֆիկացիալի պիոներ Եղիսոնը		
5.	Ելաչիչ Յեվ.—Կենդանական և բուսական աշխարհների փոխհարաբերության մասին . . . . .	25	»
6.	████████.—Զարմանալի զենքեր . . . . .	35	»
7.	Գաբրիելյան Ռ.—Ճագարամուկը, բազների լեռնեց .	25	»
8.	████████.—Կենդանի ճրագներ . . . . .	25	»
9.	Կանսկան Քիմյուն. —Գիշերվա խավարի և սառուցների մեջ հատ . . . . .	60	»
10.	Գաբրիելյան Ռ.—Մողեսների աշխարհում . . . . .	25	»
11.	Կանսկան Ք.—Գիշերվա խավարի մեջ հատ, Ա . . . . .	75	»
12.	Կարինցեվ.—Դեպի անհայտ հեռուսներ . . . . .	75	»
13.	Պիմենովա, Վ. Կ.—Աղապարիկով դեպի Գրենլանդիա	60	»
14.	Կեշայեվ Ա. Պ.—Ստորերկրյա ուժերի աշխատանքը	1	»
15.	Ռուբակին Վ. Ա.—Բնության մեծ և անեղ յերկությունը . . . . .	75	»
16.	Շարոնով Վ. Վ.—Մարս մոլորակը . . . . .	35	»

Գիմել Հայզիրք ակց. ընկ. բոլոր գրախանութերին յեվ բաժանմունքներին.